

ԳՈՆԿՐԵՍԸ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է ԹՈՒՐՔԻՈՅ 111 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐԻ ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԻՆ

Միացեալ Նահանգներու Գոնկրեյսը հաւանութիւն տուած է Թուրքիոյ 111 միլիոն տուրք ընդհանուր արժողութեամբ սպառողներու վաճառքի մասին գործարքին:

Ըստ Թրքական լրատուամիջոցներուն, Սպիտակ Տունը Թուրքիոյ սպառողներու վաճառքի նպատակով համապատասխան թուղթերու վաճառքի համար, Հոկտեմբեր 28-ին պաշտօնապէս դիմած էր Գոնկրեյսին:

Զեռք ձգուած պայմանաւորուածութեան համաձայն, ամերիկեան կողմը Թուրքիոյ պիտի վաճառէ նաեւ մարտական երեք «սուփըր Գոպրա» ուղղաթիւներ:

Յիշեցնենք, որ ամերիկացի խումբ մը օրէնսդիրներ նախապէս Գոնկրեյսին ներկայացուցած էին բանաձեւ մը, կոչ ուղղելով՝ դադարեցնել գէնքի վաճառքը Թուրքիոյ:

Գոնկրեյսականներ Հաուըրտ Պըրմընի, Նիթա Լոուէյի, էլիոթ Էնկլըի, Պէտ Երմընի, Սթիվ Իսրայէլի, Շելլի Պըրքիի եւ Ատըմ Շիֆի կողմէ ներկայացուած թիւ 83 բանաձեւին մէջ Պարաք Օպամայի

վարչակազմին կոչ կ'ուղղուէր կասեցնելու Թուրքիոյ 111 միլիոն տուրք ընդհանուր արժողութեամբ սպառողներու վաճառքի մասին գործարքը:

Գոնկրեյսականները իբրեւ իրենց կոչը հիմնաւորող փաստ, յիշած էին Թուրքիոյ կողմէ Միացեալ Նահանգներու դաշնակիցներ նկատուող Իսրայէլի, Հայաստանի եւ Կիպրոսի նկատմամբ ցուցաբերուող բացասական վերաբերմունքին առնչութեամբ ունեցած իրենց լուրջ մտահոգութիւնները:

«Թուրքիա կը շարունակէ սպառնալ Իսրայէլին, շրջափակման մէջ կը պահէ Հայաստանը, կը շարունակուի Կիպրոսի Թրքական գրաւումը: Անգարան, որ մեր դաշնակիցն է, միեւնոյն ժամանակ բացասական դիրքորոշմամբ հանդէս կու գայ մեր բարեկամներու եւ դաշնակիցներու դէմ: Միացեալ Նահանգները Թուրքիային գէնք վաճառելու փոխարէն պէտք է ուշադրութիւն դարձնէ այդ լուրջ մտահոգութիւններուն», - ըստած էր Ամերիկայի Ներկայացուցչներու Տան ներկայացուած բանաձեւին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ 80 ՏՈՒՆՈՒԸ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ժողովրդավարութեան կողմնակիցներու թիւը Հայաստանի մէջ 2006-էն ի վեր աճած է 28 տոկոսով՝ գերազանցելով Եւրամիութեան անդամ պետութիւններու մեծ մասին մէջ արձանագրուած նման ցուցանիշը:

«Ժողովրդավարական հաստատութիւններու ի նպաստ հանդէս կու գայ Հայաստանցիներու գրեթէ 80 տոկոսը», - կը հաստատատէ վերակառուցման եւ Զարգացման Եւրոպական Պանքի (ՎԶԵՊ) կողմէ Նոյեմբեր 15-ին հրատարակուած զեկոյցի արդիւնքները:

Պանքի հետազոտութեան նպատակ էր պարզել, թէ արդեօք համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններուն տակ փոխուած է եւրոպական պետութիւններու եւ յետօրհային երկիրներու բնակիչներու վերաբերմունքը՝ շուկայական տնտեսութեան ու ժողովրդավարական հաստատութիւններու հանդէ:

Նոյն զեկոյցի համաձայն, վրաստանի մէջ ժողովրդավարութեան կողմնակիցներու թիւը կը գերազանցէ 70 տոկոսը, իսկ Ատրպէյճանի մէջ շուրջ 60 տոկոս է:

ՎԶԵՊ-ի մասնագէտները կ'արձանագրեն, որ ժողովրդավարութեան աջակցութեան մակարդակով Հայաստանը գրեթէ նոյնութեամբ կը կրկնէ Արեւմտեան Եւրոպայի պետութիւններուն մէջ



Հայաստանի ժողովուրդը կը շարունակէ պայքարիլ ժողովրդավարութիւն համար

արձանագրուած միջին ցուցանիշը: Որոշ պարագաներուն Հայաստան այս ցուցանիշներով նաեւ կը գերազանցէ այդ տարածաշրջանի երկիրներուն: Այսպէս, Իտալիոյ մէջ ժողովրդավարութեան կողմնակից են միայն 68 տոկոսը, Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսիայի մէջ այդ ցուցանիշը կը տատանի 75 տոկոսի շուրջ:

Ժողովրդավարական հաստատութիւններու հանդէպ ամենամեծ հրապարակութիւնը ապրած են Եւրամիութեան անդամ արեւելեան եւրոպայի պետութիւններու բնակիչները՝ նախեաւ աջ Հունգարիան, Սլովակիան եւ Սլովենիան:

ՎԶԵՊ-ի մասնագէտները նա-

Շաբ.ը էջ 5

ՄԻՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ԾԵԾԻ ԵՆԹԱՐԿԱԾ Է ԿԻՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻԼՎԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻՆ

Միւնիքի մարզպետ Սուրէն Խաչատրեան ծեծի ենթարկած է կին գործարար Միլվա Համբարձումեանին: Դէպքը պատահած է «Արմենիա-Մարիթ» հիւրանոցի մուտքի սրահին մէջ եւ գործարարը ինքն է որ, հեկեկալով այդ մասին պատմած է լրատուամիջոցներուն:

Ըստ տիկին Համբարձումեանի, ինքը հիւրանոց եկած է հանդիպման մը համար, երբ յանկարծակի վրայ հասած է Միւնիքի մարզպետը եւ առանց որեւէ բառ ըսելու յարձակած է իր վրայ: «Եթէ չըլլային միջոցառումներ՝ ինչպէս Միւնիքիի ու Սամուէլ Սարգսեանի միջամտութիւնը, Սուրէն Խաչատրեան արդէն ոտքերով կը հարուածէր իրեն», - ըսած է գործարարը:

Այս դէպքին մի քանի օր առաջ, մամուլը ասուլիսի մը ընթացքին, Հայաստանի մէջ հանքավայրի շահագործմամբ զբաղուող եւ մեծ ներդրումներ կատարած Միլվա Համբարձումեան յայտնած էր որ, կը պատրաստուի Եւրոպական դատարանի միջոցով ետ ստանալ «Լիճվազ Թէյի» ոսկիի հանքավայրին մէջ իր ներդրած 3,5 մլն տուրքը, որ կորսնցուցած է ապօրինութիւններու պատճառով:

Ան լրագրողներուն պատմած էր, որ հանքավայրի շահագործման թոյլտուութիւնը իրմէ խլուած էր ապօրինաբար, Միւնիքի մարզպետ Սուրէն Խաչատրեանի օգնութեամբ: Ըստ գործարարի, մարզպետը «Լիճ-



Գործարար Միլվա Համբարձումեան

վազ Թէյի» հանքավայրէն իւրացուցած է 275 հազար տոյրի սարքաւորում: 2010 թուականի Դեկտեմբերի 3-ին վերոյիշեալ հանքի շահագործման իրաւունքը «աճուրդով» փոխանցուած է «Սագամար» ընկերութեան, որ կը պատկանի վարչապետի նախկին խորհրդական, մանկապղծութեան մէջ մեղադրուող Սերոբ Տէր-Պողոսեանին:

Միլվա Համբարձումեան յայտարարած էր, որ իր իրաւունքները պիտի պաշտպանէ մինչեւ վերջ:

Դէպքի առնչութեամբ ոստիկանութիւնը բացած է քննութիւն: Փաստաբան Կարէն Թունեան գրաւոր դիմած է ոստիկանապետին ինդիքելով ապահովել Միլվա Համբարձումեանի ապահովութիւնը, քանի որ դէպքի կրկնութիւնը բացառուած չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ ԴԺԳՈՐ ԵՆ ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԵՆ

Նոյեմբեր 15-ին Հայաստանի Սահմանադրական Դատարանը քննելով Մարդու Իրաւունքներու Պաշտպան Կարէն Անդրէասեանի դիմումը՝ Քաղաքացիական օրէնսգիրքի 1087.1 յօդուածի սահմանադրականութեան հարցով, որոշեց, որ յօդուածը կը համապատասխանէ Սահմանադրութեան: Դատարանը միեւնոյն ժամանակ ներկայացուց շարք մը իրաւական մտտեցումներ, օրինակ այն, որ փոխհատուցման չափը սահմանելու ժամանակ պէտք է հաշուի առնել պատասխանող կողմի կարողութիւնները:

Այդ յօդուածով, վերջին շրջանին օլիգարխներու կողմէ, իրենց արժանապատուութիւնը վիրաւորելու մեղադրանքով դատեր կը բացուէին տպագիր մամուլի օրկաններուն դէմ ու դատարանները մեծազուգում փոխհատուցումներ սահմանելով, թերթերը կը հասցնեն անանկութեան եզրին:

«Առաւօտ» օրաթերթի խմբագիր Արամ Աբրահամեան «Ազա-



տութիւն» ուստիոկայանին յայտնեց, որ դժգոհ է դատարանի որոշումէն: Ան կարծիք յայտնեց որ, միակ ճիշդ լուծումը կ'ըլլար այն, որ Սահմանադրական Դատարանը, յօդուածը հակասահմանադրական ճանչնալով, գայն ետ վերադարձնէր Ազգային ժողով:

«Ասուլիսները մէկի ժամանակ սասցի, որ աւելի շուտ Աբդուլա Գիւլը կ'ընդունի Հայոց Յեղապանութիւնը, քան Հայաստանի Սահմանադրական Դատարանը կ'ընդունի որոշումը յօդուած լրագրողները»:

Շաբ.ը էջ 4

ՁԵՐ ՉԱՐԱԾԻ ԴԻՄԱՅ ՄԵՆՔ ԵՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ

ՌԱԶՄԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարութեանը եւ անձամբ նախարարին ինչքա՞ն ժամանակ է պէտք հասկանալու համար, որ, մենք՝ հարկատուներս, «նորին մեծութիւն» հայոց դեսպաններին ու դիւանագէտներին մեր գրպանի հաշուին չենք վարձատրում, որ շրջագայն ու իրենց անձնական պիզնեսները «ծաղկեցնեն» հայրենիքից դուրս՝ ի բարօրութիւն այլ ազգերի: Փաստեր որքան ուզում էք, մենք երեւի աշխարհում միակ երկիրն ենք, որի դեսպանները, աշխատանքից ազատուելուց յետոյ, մնում են այն երկրում, որտեղ դեսպան են աշխատել: Միայն չար դարանաք, թէ իրենց «գործն» են շարունակում, այդ կարողութիւնները Հայաստանի ոչ մի դեսպան չի ունեցել, այլ բան է, որ այլոց համար են աշխատում:

Միջազգային կազմակերպութիւններում եւ օտար երկրներում այդ ինչո՞վ էք զբաղուած, որ նոյն ատեններում հայերս չենք կարողանում որեւէ առաջընթաց կամ զգալի արդիւնք ապահովել:

Հիմա նորից յայտարարում էք՝ ի՞նչ կայ, որ Ատրպէյճանը դարձել է ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի ժամանակաւոր անդամ: Մեր երկրի ԱԳՆ-ն մեզ հանգստացնում է, թէ Միւնսկի խմբի եռանախաղաղական Անվտանգութեան խորհրդի մշտական անդամ են (ունեն վեթոյի իրաւունք)։ Ետոյ ինչ, Պաղատում էլ շատ խուրմա կայ, մե՛զ ինչ: 1915-ին էլ եւրոպական երկրները կային, բայց մեզ ցեղասպանութեան ենթարկեցին, հայրենազրկեցին, քանի որ հայոց դիւանագիտական մտքի «տի-

տանները» փոխանակ ազգը համախմբելու, միասնականացնելու եւ միասնական պայքարի դուրս գալու, ձեզ պէս յոյսերը դրեցին սրանց-նրանց վրայ: Վերջում մնացինք առանց հայրենիքի ու սիրուեցինք աշխարհով մէկ:

Այսօր էլ Ատրպէյճանի առաջին քայլը լինելու է ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդին նախագիծ ներկայացնելը, թէ Հայաստանի Հանրապետութիւնն ազրեսոր է: Եւ, հաւատացէ՛ք, շատ հանգիստ կը ստանայ իր 155 «ընկերները» համաձայնութիւնը, ինչպէս ստացաւ ժամանակաւոր անդամ դառնալու համար:

Յետոյ էլ կը համար այն բանին, որ Արցախում եւ շփման գոտում տեղակայուեն, այսպէս կոչուած, միջազգային խաղաղարար ուժեր, մեր մուտք ու ելքը կը փակեն, իսկ մեր մուտք ու ելքը փակելուց յետոյ դատարկուած Արցախին կը մնայ կարճ ժամանակում հայաթափուել (կասկածող եմ փնտռում): Եւ այս գործընթացին նրանք ձեռնամուխ կը լինեն ցանկացած առիթով, չեն խորշի ոչ մի բանից:

Նորից կասէ՛ք՝ մենք ինչ մեղք ունենք, որ այդպէս ստացուեց, ինչպէս հիմա էք ասում, մենք ինչ անենք, որ Նախիջևեանը դատարկուեց, որ այնտեղ մեր աչքերի առաջ կատարուել եւ կատարուած է մշակութային ցեղասպանութիւն: Դէ, եթէ ոչինչ էք կարող անել, ամենաքիչը հեռացէ՛ք, թէ չէ ձեր չարածների դիմաց մենք արդէն վճարել ենք եւ դեռ էլի ենք վճարելու: Այսբանից յետոյ դեռ պետպիւտե՛կից էլ աւելի գումար էք պահանջում: Որ ի՞նչ անէք:

«ԻՐԱՒՈՒՆԻ ՏԷՖԱԿՏՕ»

ՍՈՒՐՃԻ ԲԱԺԱԿԸ ՆԱՅԵԼԻՍ

ԱՐԱՄ ԱՐԱՆԱՄԵԱՆ

Եթէ հետեւեա կայքերում տեղադրուող մամուլի տեսութեանը, ապա մեր թերթերը գրում են բացառապէս սպասուող պաշտօնականութիւնների եւ նշանակումների մասին: Երէկ, օրինակ, ես նմանատիպ լուրեր կարդացի Հեղինէ Բիշարեանի, Հերմինէ Նաղդալեանի, Գագիկ Բեգլարեանի, Վճռաբեկ դատարանի նախագահի եւ ՀՀ նախագահի վերահսկողական ծառայութեան ղեկավարի մասին: Կարելի է մտածել, որ մեր երկրի բնակչութիւնը ապրում է նրանով, թէ կը դառնայ՝, ասենք, Հերմինէ Նաղդալեանը Աժ փոխնախագահ, կամ կը գտնուի՞ արդեօք պաշտօն Գագիկ Բեգլարեանի համար, եւ նրանից, թէ ինչպէս են լուծուելու այդ հարցերը, կախուած է մարդկանց բարեկեցութիւնն ու երջանկութիւնը: Քաղաքականամերձ լրագրողները, հաւանաբար, յաճախ են իրար հանդիպում, սուրճ են խմում, յետոյ բաժակները շուռ են տալիս եւ որոշում են՝ ում կիսադէմն է արտատպուել բաժակի վրայ՝ Արմէն Գեորգեանի՝, թէ, ասենք, Յասմիկ Պողոսեանի: Ըստ այդմ էլ կառուցուում են նրանց «վերլուծութիւնները»:

Նոյնիսկ այնպիսի համեստ եւ ոչ յաւակնոտ անձնակազմութիւն, որ պահին են եմ, կարող է, պարզուում է, արտապատկերուել սուրճի այդ բաժակների պատերին: Երէկ ծանօթներիցս մէկն ինձ հարցրեց՝

ճի՞շդ է, որ քեզ պաշտօն են տալիս: «Ի՞նչ պաշտօն», - գարմացայ ես: «Պատգամաւորի», - պատասխանեց ծանօթս: (Ի դէպ, նա առաջինը չէր, ով ինձ այդ անհեթեթ հարցն էր տալիս): Թէեւ նրա ձեւակերպումն իրաւական առումով գրագէտ չէ, բայց ըստ հոլթեան շատ էլ ճիշդ է. պատգամաւորութիւնը Հայաստանում հենց «պաշտօն» է, որը «տալիս են», եթէ դու քեզ համապատասխան ձեւով ես պահում: Հենց այդ պատճառով էլ պատգամաւոր լինելը խիտ վարկաբեկիչ զբաղուող է Բ. Աժ-ն ինձ եւ, վատահեմ՝ ոչ միայն ինձ, ներկայանում է Նաույի եւ Յուլիեցի Կարոյի, ոչ թէ Դաւիթ Յարութիւնեանի կամ Ստեփան Սաֆարեանի տեսքով:

Եթէ իրական որոշումներն ընդունուում են ոչ թէ խորհրդարանի դահլիճում, այլ լաւագոյն դէպքում՝ նախագահականում, իսկ վատագոյն դէպքում՝ քէպպալի սեղանի շուրջ, պատգամաւորական աշխատանքը դառնում է անիմաստ եւ բովանդակազուրկ: Եւ ինչո՞ւ միայն պատգամաւորի: Նոյնիսկ այն մարդիկ, ովքեր իրենց «ծագումնաբանութեամբ» հեռու են ներկայիս վերնախաւի այդ համընդհանուր հոգեբանութիւնից, նրա հետ շփուելով, այսպէս ասած, միաձուլուում են մեծամասնութեանը: Վարչապետ Տիգրան Սարգսեանը՝ ձեզ օրինակ: Կարո՞ղ էր նա, ասենք, 20 տարի առաջ պատկերացնել, որ մի «բաժակ բան է

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանի մեղիադաշտն ու սոցիալական ցանցերը ակտիւօրէն անդրադառնում են վարչապետի մանակցութեամբ յայտնի հեռուստայնութիւն, ուր վարչապետը թողնում էր մեղմ ասած «ոչ սովորական» տպաւորութիւն:

Բայց, թերեւս ոչ պակաս կարեւոր է ոչ միայն այն, թէ ինչպէս էր խօսում վարչապետը, այլ նաեւ այն, թէ ինչ էր խօսում:

Նա խօսում էր բարձր տրամադրութեան մասին, ապագայ յարթանակների մասին, որ ըստ նրա լինելու են շախմատում եւ ֆուտպոլում: «Եւ այդ ներուժը այս դահլիճում է», յայտարարում էր Տիգրան Սարգսեանը:

Թերեւս արժէ ուշադրութիւն դարձնել հենց այդ տոնայնութեանը՝ «այդ ներուժը այս

Միգուցե Թաթա լսող երիտասարդութիւնը ֆուտպոլային ներուժ պարունակի, բայց հազիւ թէ շախմատային ներուժ պարունակող երիտասարդութիւնը երիտասարդութեան օրուայ առիթով Թաթայի համերգին հաւաքուի

դահլիճում է»: Իսկ դահլիճում հաւաքուել էր Թաթա լսող երիտասարդութիւնը, որովհետեւ ՀՀԿ-ն երիտասարդութեան օրուայ առիթով Թաթայի համերգ էր կազմակերպել:

Միգուցէ Թաթա լսող երիտասարդութիւնը ֆուտպոլային ներուժ պարունակի, բայց հազիւ թէ շախմատային ներուժ պարունակող երիտասարդութիւնը երիտասարդութեան օրուայ առիթով Թաթայի համերգին հաւաքուի:

Սակայն խնդիրը միայն դա չէ: Տիգրան Սարգսեանն այդ պահին գուցէ միայն ֆուտպոլն ու շախմատը մտաբերեց, բայց անշուշտ նկատի ունէր այլ յաղթանակներ եւս, հետեւաբար նկատի ունէր, որ դահլիճում այլ յաղթանակների ներուժ էլ կար:

Այստեղ է թերեւս նշմարուում գլխաւոր խնդիրը: Թաթայի այդ համերգին հաւաքուել էր ասենք մի քանի հազար երիտասարդ, այն էլ անկասկած ՀՀԿ-ական կամ ՀՀԿ-ամերձ երիտասարդ: Երբ վարչապետը յայտարարում է, որ յաղթանակների ներուժը «այս դահլիճում» է, դրանից կարծես թէ որոշակիօրէն ֆաշիստական հովեր են փչում:

Բանն այն է, որ այդ պահին դահլիճից դուրս էր գտնուում երեւի թէ մի քանի անգամ աւելի երիտասարդութիւն: Դահլիճից դուրս գտնուող երիտասարդութիւնը, մեղմ ասած, հազիւ թէ պակաս ներուժ ունենայ, քան այդ պահին դահլիճում եղածը:

Հետեւաբար, երբ վարչապետը ոչ թէ յայտարարում է, թէ այդ ներուժն ունի Հայաստանի երի-

խմելու» Թաթայի երաժշտութեան տակ:

Մի խօսքով՝ պատգամաւոր ես չեմ դառնայ: Եթէ նոյնիսկ ազգովի խնդրեն:

«ԱՌԱՒՕՏ»

տասարդութիւնը, կամ թէ այդ ներուժի մի մասը այդ դահլիճում է, այլ ասում է, որ «եւ այդ ներուժը այս դահլիճում է», ապա ստացուում է նրա իսկ առաջ քաշած «կոտրած տաշտակի տարբերակի» մոդիֆիկացիան:

Այսինքն, ով մեզ հետ է, ունի յաղթանակների ներուժ, իսկ ով մեզ հետ չէ, ով դրսում է, նա կը կանգնի «կոտրած ներուժի» առաջ:

Ներկայում համաշխարհային ասպարէզում մոդայիկ է դարձել «մենք» տրամաբանութեամբ նախընտրական հեռուորաբանութիւնը՝ «այո, մենք կարող ենք», ասում էր Օպաման ԱՄՆ-ում, «Անենք դա միասին», ասում են «եղինառոտները» Ռուսաստանում:

Հայաստանում սակայն այդ «մենքը» դարձրել են ոչ թէ առաջարկ հասարակութեանը, այլ սպառնալիք եւ շանտա՞՜ «մենք սա ենք, եւ եթէ դու չդառնաս մենք, ապա մենք քեզ կը դարձնենք «կոտրած տաշտակի առաջ կանգնած կամ գուցէ նոյնիսկ նստած մարդ»: Մօտաւորապէս այդ հովն է փչում ներկայում իշխող կուսակցութեան նախընտրական տրամադրութիւններից:

Ու թերեւս հենց այդ հովերն են առաւել մտահոգիչը, քան այն, թէ ինչի ազդեցութեան տակ են հռչակուում դրանց տարբեր մոդիֆիկացիաները: Բանն այն է, որ այդ ամէնը կամաց-կամաց կարծես թէ ֆաշիզմ է յիշեցնում, երբ ամէն ինչ նոյնականացուում է մի կառույցի հետ:

Ըստ երեւոյթի, առաջիկայում Տիգրան Սարգսեանը կը վերանայի նաեւ իր «հայկական աշխարհի» տարբերակը եւ կը յայտարարի «ՀՀԿ-ական աշխարհի» կառուցման մասին:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
 ԿԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$120.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՈՎԻԿ ԱՐՐԱՅԱՄԵԱՆՆ ԻՐ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ ԱՐԱԳ ԼՔԵԼ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

Ազգային ժողովի նախագահ Յովիկ Արրայամեանը, ով Նոյեմբերի 14-ին, Աժ ամբիոնից յայտարարել է իր հրաժարականի մասին, այդ յայտարարություններից անմիջապես յետոյ, արագորէն լքել է խորհրդարանի շէնքը: Նա չի մեկնաբանել իր հրաժարականը, թէեւ լրագրողները սպասում էին, որ նա կը գրուցի իրենց հետ, մեկնաբանելով իր քայլը:



ՀՀ Ազգային ժողովի երաժարեալ նախագահ Յովիկ Արրայամեան

Մեկնաբանություններից գերծ են մնացել նաեւ Աժ փոխնախագահ Սամուէլ Նիկողոսեանը, ով համարում է Աժ նախագահի ամենահաւանական թեկնածուն, ինչպէս նաեւ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Հերմիլէ Նաղդալեանը, ով համարում է Աժ փոխնախագահի հաւանական թեկնածու: Աժ փոխնախագահի պաշտօնը թափուր կը մնայ, երբ Աժ նախագահ ընտուի Սամուէլ Նիկոյեանը:

Աւելի վաղ NEWS.am-ը յայտնել էր, որ Յովիկ Արրայամեանի հրաժարականի հետ կապուած, աշխատանքից ազատուելու դիմումներ են ներկայացրել նաեւ Աժ մի քանի աշխատակիցներ:

NEWS.am-ի հաւաստի աղբիւրների փոխանցմամբ, աշխատանքից հեռանալու դիմում գրողների շարքում են Աժ նախագահի գլխաւոր խորհրդական Վիկտոր Մնացականեանը, Աժ նախագահի օգնական Սերգէյ Լոբեանը եւ Աժ մշակութի հարցերի պատասխանատու Արմինէ Անտիկեանը:

Յովիկ Արրայամեանը Ազգային ժողովի ամբիոնից յայտարարելով իր հրաժարականի մասին, իր խօսքում մասնաւորապէս նշել է.

«Լիովին գիտակցելով պատասխանատուութիւնը ժողովրդի, կուսակցութեան, նախագահի առջեւ, ներկայացնում եմ հրաժարականի իմ դիմումը: Դուք արդէն գիտէք, որ ես գլխաւորելու եմ շտաբը, եւ արդէն յայտարարել եմ, որ վաղաժամ վաչր եմ դնելու լիազօրութիւնները: Մեր երկիրը մտնում է հերթական ընտրութիւնների փուլ, ընտրութիւններ, որոնց բարձր մակարդակով անցկացնելը բոլորիս եւ առաջին հերթին իշխանութիւնների պատուի գործն է»:

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ «ՅԱԻՕՔ, ԽՄԱԾ ՉԷԻ»

Վարչապետ Տիգրան Սարգսեանը ճիշդ է համարում, որ գործադիր իշխանութիւնը գերծ մնայ Սիւնիքի մարզպետի մասնակցութեամբ միջադէպը գնահատելուց մինչեւ նախաքննութեան աւարտը:



Վարչապետը լրագրողներու հետ հարցուպատասխանի ժամանակ ինձ խորհուրդ էր տալիս, որ իմ կեանքում ընկերութիւն չանեմ էն մարդկանց հետ, որոնք չեն խմում»

«Վարչապետն իրաւունք չունի գնահատական տալ, քանի դեռ ծանօթ չէ փաստերին», - Աժ-ում լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ ասել է Տիգրան Սարգսեանը:

Վարչապետին հարց ուղղուեց առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնների հետ կապուած: Կլիւնե՞ն գործարար պատգամաւորներ յաջորդ Ազգային ժողովում: Սահմանադրութեան եւ օրէնքների պահանջն է, որ չլինեն, - ասաց Տիգրան Սարգսեանը:

Վարչապետը նաեւ պնդեց, որ երիտասարդութեան օրուայ առիթով ՀՀԿ կազմակերպած համերգին խմած չի եղել, եւ դահլիճում այդ պահին հազարաւոր մարդիկ են եղել եւ տեսել են, որ ինքն անսթափ չէ:

«Հիմա ասում են, ինչ ա եղել, իմել է՝ թող ասի՝ իմել է, բա այն մարդիկ, որ կողքիս են եղել, չե՞ն ասի վարչապետը սուտ է խօսում: Յաւոք, իմած չէի», - ասաց նա: Չնայած. «Անկեղծ ասած, իմ պապս

Ըստ նրա, համերգի ընթացքում տեխնիկական խնդիրներ են եղել: «Բեմը գտնուում էր ուղղակի մեր տրիբունայի դիմաց ու բոլոր սարքաւորումներն ու բարձրախօսները հեռու էին գտնուում, ու երբ ես սկսեցի խօսել արձագանքն այնքան ուժեղ էր հարուածում ինձ, որ չէի կարողանում լսել, թէ ինչ նախադասութիւն եմ արտասանում: Դա, իհարկէ մեր թիմի թերութիւնն էր: Եթէ նախատեսել էին ինձ համար ելույթ ճիշդ կը լինէր, որ ես էլ ամբիոնից ելույթ ունենայի», - ասել է Տիգրան Սարգսեանը:

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՉԻ ԱՆՑԵԼ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Հայաստանի Պաշտպանութիւնի կենտրոնի տնօրէն Ռուբէն Թորոսեանին մտահոգում է այն փաստը, որ Երեւանի ՀՀԿ-ական նոր քաղաքապետ Տարօն Մարգարեանը չի անցել պարտադիր զինուորական ծառայութիւն: «Զինապարտութեան մասին» ՀՀ օրէնքի պահանջների համաձայն, երեւանցիները իրաւունք ունենք տեղեկանալ նոր քաղաքապետի պարտադիր զինուորական ծառայութիւնից ազատուելու օրէնսդրական հիմքերի մասին», - ասուած է նրա հարցրուածութեան մէջ:

«Յոյս ենք յայտնում, որ իրաւական եւ արդարացի այդ քայլը կ'արուի, գոնէ, քաղաքապետի երդման արարողութեան ժամանակ», - կարծում է Ռուբէն Թորոսեանը:

«ԱՆԿԱՆ ԱՅՆ ԲԱՆԻՑ՝ ՈՎ ԿԸ ԳԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ, ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՄՆԱԼՈՒ Է ՆՈՅՆԸ»-. ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ

Հայաստանի մասին խօսելիս հնարաւոր չէ սահմանափակուել միայն Հայաստանով. մոլորակի վրայ զարմանալի փոփոխութիւններ են կատարուում, մարդկութիւնը իր զարգացման փուլում ճգնաժամ է ապրում, այդ են վկայում յեղափոխութիւնները, ուժային կենտրոնների միջեւ բախումները: Նման տեսակէտ Նոյեմբեր 13-ին յայտնեց «Ղարաբաղ կոմիտէի» նախկին անդամ, քաղաքագէտ, վերլուծաբան Աշոտ Մանուչարեանը: Ըստ նրա, սա նշանակում է, որ մարդը իր նախնական զարգացման փուլն աւարտել է եւ փնտում է ուղիներ նոր վիճակի անցնելու համար:



«Ղարաբաղ կոմիտէի» նախկին անդամ Աշոտ Մանուչարեան

«Մարդը պէտք է նախեւառաջ փոխի իր վերաբերմունքը շատ ուտելու, շատ հաճոյքներ եւ տարածքներ ունենալու հանդէպ: Եթէ ոչ, երկիր մոլորակը կը հրաժարուի մարդուց, քանի որ երկրագնդի ռեսուրսները սպառուում են: Առաջիկայ մարտահրաւէրները աւելի խորն են լինելու, քան մինչ այժմ է եղել, դա պարենային եւ բնական աղբյուրների ճգնաժամն է լինելու», - համոզուած է Մանուչարեանը:

Քաղաքագէտը կարծում է, որ Հայաստանը գաւառ է աշխարհի համար եւ մի քիչ հետ է ընկնում զարգացումներից. «Մարդկային զարգացման մոդելները, որ մեզ մօտ բարձրաձայնում են՝ ժողովրդավարական արժէքներ, քաղաքացիական հասարակութիւն եւ այլն, աշխարհի մեծ մասն արդէն անցել է այդ էտապը: Մենք պարզապէս հասկացել ենք, որ մեզ մօտ՝ Հայաստանում, կան խորը խնդիրներ, եւ մենք էլ պիտի շարժուենք տեղից: Ահա սա է ներկայ պահին Հայաստանում տիրող փոփոխութիւնների ողջ խորքային իմաստը», - ասաց նա: Մանուչարեանի համոզմամբ, իշխանութիւնն այս կտրուկ քայլե-

րով փորձում է աշխարհի իր աւագ գործընկերներին եւ սեփական ժողովրդին ցոյց տալ, որ անհրաժեշտ փոփոխութիւններ ունակ է կատարել սեփական ուժերով: «Իրականում այդ փոփոխութիւնները աւելի շատ խորամանկութիւններ են պարունակում, քան կարող ենք պատկերացնել: Հաստատվի օլիգարխներին գալու են փոխարինելու, այսպէս կոչուած, հարվարդեան երիտասարդները, որոնք աւելի վտանգաւոր կը լինեն, քան օլիգարխները», - նշեց նա:

Աշոտ Մանուչարեանը կարծում է, որ եթէ ներսից իրենիցներ լինեն, ապա Հայաստանում կը լինի յեղափոխութիւն, քանի որ ընչազուրկների թիւը մեծանում է: «Ամբողջ քաղաքական պնակը, լինի դա ընդդիմութիւն, թէ իշխանութիւն, պայքարում են երեք բանի համար՝ իշխանութիւն, փող եւ փառք: Այնպէս որ, անկախ այն բանից, թէ ով կը գայ իշխանութեան, ժողովրդի վիճակը մնալու է նոյնը», - ասաց վերլուծաբանը:

«ԲԱՐԳԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴԱՍԸ ՀԵՐՔՈՒՄ Է ԸՆՏՐԱԿԱՇԱՈՔ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Անցած Կիրակի՝ Նոյեմբեր 13-ին իջեւանի քաղաքապետի ընտրութիւններում յաղթած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամ Վարդան Ղալուբեանի վստահուած անձանցից Ազգային ժողովի պատգամաւոր Նաիրա Զոհրաբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հերքեց, թէ «Բարգաւաճ Հայաստան»-ը ընտրակաշառք է բաժանել:

«Միանշանակ բացառում եմ», - յայտարարեց պատգամաւորը:

Արձագանքելով պարտուած թեկնածուի, իջեւանի արդէն նախկին քաղաքապետ Վարուժան Ներսիսեանի յայտարարութիւններին, թէ «Բարգաւաճ Հայաստան»-ը 10-15 հազարական դրամ ընտրակաշառք է բաժանել՝ Զոհրաբեանը ասաց, թէ ինքը տեղեակ չէ նման բողոքներից, եւ եթէ անգամ այդպիսի բողոքներ կան, ապա դրանք «բացարձակապէս չեն համապատասխանում իրականութեանը»:

Պատգամաւորն ընդգծեց, որ ոստիկանութիւնն արդէն պարզաբանում տուել է, որ մէկ-երկու հոգու բերման ենթարկել են ընտրակաշառք բաժանելու կասկածանքով, բայց նրանց ազատ են արձակել, քանի որ կասկածները չեն հաստատուել. - «Եւ սա,

կարծում եմ, յստակ պատասխանն է այլեւս նախկին քաղաքապետին»:

Հարցին, թէ կարելի է արդեօք պնդել, որ ընտրութիւնն անցել է ազատ ու արդար, Նաիրա Զոհրաբեանը պատասխանեց. - «Կարելի է իսկապէս ասել, որ նորմալ ընտրութիւններ տեղի ունեցան: Նորմալ ասելով՝ ենթադրում եմ ազատ ընտրութիւններ: Իհարկէ, մենք էլ կարող ենք խօսել որոշակի երեւոյթների մասին, բայց ես հիմա չեմ ցանկանում դրա մասին խօսել: Կարեւորն այն է, որ իջեւանցին կարողացաւ իր քուէն հասցնել տեղ: Ինձ անընդհատ հարցնում էին, թէ ինչու են «Բարգաւաճ Հայաստան»-ի ներկայացուցիչները այնտեղ: Մենք այնտեղ էինք իջեւանցու քուէն պաշտպանելու համար»:

Զոհրաբեանը, ի դէպ, անընդունելի է համարում, երբ այս ընտրութիւնները փորձում են տեղափոխել ՀՀԿ-ի եւ «Բարգաւաճ Հայաստան»-ի միջեւ «ենթադրեալ» հակամարտութեան դաշտ. - «Բացարձակապէս անպտուղ է: Այս ամէնը փորձ է կրկին անգամ տեղափոխել ՀՀԿ - ԲՀԿ ենթադրեալ հակամարտութիւնների դաշտ»:

ԼՈՒՐԵՐ

ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻՐ ԱՃՈՒՄ Է

«Մոտենդները թիւը հանրապետութիւնում կազմել է 1995, մահուան դէպքերը՝ 988: Արդիւնքում մենք ունենք 1007 մարդ բնական աճ», - լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Լեւոնային Ղարաբաղի ազգային վիճակագրական ծառայութեան խորհրդի նախագահ Մանուշ Մինասեանը:

Ըստ վիճակագրական տուեալների, վերջին երեք տարում Ղարաբաղում ծնունդների մէջ գերակշռում են արու զաւակները:

Լեւոնային Ղարաբաղում տարածուած են Գոռ, Դաւիթ, Տիգրան, Աննա, Անի, Մանէ անունները:

«Մինչեւ մէկ տարեկան երեխաների մահուան դէպքերը հազար կենդանածինի հաշուով, ինն ամսուայ կտրուածքով, կազմել է 25 դէպք՝ նախորդ տարուայ 26-ի փոխարէն», - յայտարարեց Մինասեանը՝ յաւելելով, որ նուազել են նաեւ մինչեւ 5 տարեկան երեխաների մահացութեան դէպքերը:

Այս տարի նուազել է Լեւոնային Ղարաբաղում գրանցուած ամուսնութիւնների թիւը, մինչ-

դեռ աճել է ամուսնալուծութիւնների թիւը. - «Հանրապետութիւնում, ինն ամսուայ կտրուածքով, գրանցուել է 594 ամուսնութիւն, ինչը 123-ով պակաս է նախորդ տարուայ ցուցանիշից, եւ 126 ամուսնալուծութիւն, ինչը 30-ով աւելի է նախորդ տարուայ ցուցանիշից: Փաստօրէն, 100 նոր գրանցուած ամուսնութիւններին բաժին է ընկել 21 ամուսնալուծութիւն»:

Վիճակագիրները փաստում են, որ Լեւոնային Ղարաբաղից արտագաղթ չկայ. հակառակը՝ գնալով աւելանում է Ղարաբաղի տեղափոխուողների թիւը:

«Հանրապետութիւն եկողների թիւը, ինն ամսուայ կտրուածքով, կազմել է 838 մարդ, մեկնողների թիւը՝ 514 մարդ, մեխանիկական յաւելածը 324 մարդ: Ցուցանիշները մենք ամփոփում են ԼՂ կառավարութեան աւուրթեր ոստիկանութեան անձնագրային բաժինների կողմից տրամադրուած կտրոնների հիման վրայ: Այլ հաշուառում այս պահի դրութեամբ մենք չունենք», - ասաց Մանուշ Մինասեանը:

«ԵՐԲ ՎԵՐԱԴԱՌՆԱՄ, ԿԸ ՊԱՏՄԵՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՄԱՍԻՆ».- ՍԹԻ ՎՈՋՆԵԱԿ



Սերժ Սարգսեան նրբանակ կը յանձնէ Սթիւ Վոզնեակին

Աշխարհահռչակ ՏՏ ինժեներ Սթիւ Վոզնեակը ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար արժանացել է Հայաստանի Հանրապետութեան նախագահի մրցանակի: Վոզնեակն այս մրցանակին արժանացած 2-րդ անձնաւորութիւնն է: Առաջին դափնեկիրը՝ «Ինտել կորպորացիայի» նախկին նախագահ եւ գլխաւոր գործադիր տնօրէն Քրեյգ Բարրեթն էր, որը Համաշխարհային ՏՏ Մրցանակը ստացաւ 2010թ.-ի Յունիսի 28-ին:

«Նոբէլեան մրցանակ համակարգչային ոլորտում գոյութիւն չունի: Ինձ համար խորհրդանշական է, որ նման մրցանակ սահմանել է Հայաստանի Հանրապետութիւնը: Ինչու, թերեւս այն պատ-

ճառով, որ այստեղ կան այն երիտասարդները, որոնք կարող են ստեղծագործել: Իսկ այն փաստը, որ երկրի նախագահն է շնորհում մրցանակը, ընդգծում է դրա կարեւորութիւնը», - լրագրողների հետ հանդիպմանն ասաց Apple ընկերութեան համահիմնադիր Սթիւ Վոզնեակը:

«Նայելով հայերին՝ համարում եմ, որ ձեզանից մէկն եմ: Երբ տուն վերադառնամ, կը պատմեմ հայկական ինտելեկտի մասին: Շատ դժուար է ասել՝ մենք Հայաստանն ենք, եւ ՏՏ ոլորտը յայտարարում ենք գերակայ ուղղութիւն: Բայց Հայաստանն ունի ձգտում: Յայտնի է, որ Հայաստանը շատ բաներից զուրկ է, ուստի պէտք է սեւեռուի ՏՏ ոլորտի վրայ», - ասաց Վոզնեակը:

ՌՈՒՄ ՔԱՂԱՔԱԳԵՏ.- «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՅԱՆԻ ՄԻՋԵՒ ԱՌԵՏՐԻ ԱՌԱՐԿԱՅ ՉԷ»

Լեւոնային Ղարաբաղի հարցը Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առևտրի առարկայ է: Այս մասին Նոյեմբերի 14-ին Երեւանում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում յայտարարել է Սեւեռովեան եւ կասպիցածովեան տարածաշրջանի քաղաքական եւ սոցիալական հետազոտութիւնների ինստիտուտի Աւագ գիտաշխատող, քաղաքագետ Անդրէյ Արեշեւը՝ նշելով, որ նման յայտարարութիւնները հայ-ուսական յարաբերութիւնների ամրութիւնը ստուգելու նպատակ են հետապնդում:

«Հնարաւոր է, ոմանք կը ցանկանային դա, բայց փորձը եւ ղարաբաղեան հակամարտութեան շուրջ ծաւալուող դէպքերը վկայում են, որ ամենեւին էլ այդպէս չէ: Ղարաբաղեան հակամարտութիւնը փոփոխութեան առարկայ է, ընդ որում՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նման երկրների բազ-

մական փոխգործակցութեան: Մենք գիտենք, որ առկայ են նաեւ այս հարցի տարածաշրջանային ուրուագծերը՝ Թուրքիան եւ Իրանը», - ասել է Արեշեւը:

Ըստ քաղաքագետի, այս բարդ իրավիճակում, երբ ղարաբաղեան հարցը օգտագործուած է Հարաւային Կովկաս ներխուժելու կամ տարածաշրջանում ինչ-որ հարցեր լուծելու համար, ուղղակի պայմանաւորուածութիւնները եւ ինչ-ինչ խոստումները իրագործելի չեն: «Ղարաբաղը, ինչպէս էլ դրան վերաբերուենք, ինչքան էլ խօսենք դրա չճանաչուածութեան մասին, «դե ֆակտո» միջազգային քաղաքականութեան առարկայ է: Եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացուցիչները դա հիանալի գիտեն, կարող է այդ մասին բարձրաձայն շատուի, բայց գործնականում դա այդպէս է», - նշել է Արեշեւը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ ԴԺԳՈՐ ԵՆ

Շարունակուած է 1-էն ընդհատելով լաւատես գործընկերները տարակուսում էին, նրանք ինչ-որ յոյս ունին, եւ ցաւօք սրտի, ես ճիշդ դուրս եկայ», - ըսաւ «Առաւօտ»-ի խմբագիրը՝ շարունակելով. - «Եթէ ՄԴ-ն խորհուրդ տար կամ առաջարկէր փոխել օրէնքը եւ փոխհաստուցման վերին շեմը դնել ոչ 1 կամ 2 միլիոն, այլ, ենթադրենք, 100 կամ 200 հազար դրամ, այ, դա էական կը լինէր:

Քանի որ նման բան չի եղել, նրանք կարող են հանգիստ շարունակել՝ հաշուի առնելով գոյքային վիճակը նշանակել 18 միլիոն դրամ»:

«Հրապարակ» օրաթերթի խմբագիր Արմինէ Օհանեան ըսաւ, թէ իր սպասելիքները շատ աւելին էին: Սակայն, իր կարծիքով, եթէ դատարանի հնչեցուցած իրաւական գնահատականները կենսաբի կոչուին, ապա անոնք կրնան օգտակար ըլլալ դաշտի կարգաւորման համար:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՉԻ ՎԱԻԵՐԱՑՆԻ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ

«Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումն անհնար է, եթէ Հայաստանը չհեռանայ Լեւոնային Ղարաբաղից, չհրաժարուի իր անհիմն յայտարարութիւններից Թուրքիայի դէմ»: Այդ մասին Կովկասի լրագրողների ցանցում կայացած խորհրդաժողովում յայտարարել է Թուրքիայի խորհրդարանի «Ազգայնական շարժում» խմբակցութեան պատգամաւոր, Թուրքիայի ռազմավարական հետազոտութիւնների կենտրոնի ղեկավար Սիրան Օղանը:

Նա նաեւ բարդ խնդիր է անուանել Թուրքական խորհրդարանի կողմից հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացման հաւանականութիւնը: «Ես խորհրդարանի արտաքին գործերի յանձնաժողովի անդամ եմ: Չեմ կարծում, որ խորհրդարանը վաւերացնի այդ արձանագրութիւնները: Դրանց վաւերացման համար, առաջին հերթին, Հայաստանը պէտք

է ազատի այն հողերը, որ գաւթել է: Բացի այդ, Հայաստանը պէտք է հրաժարուի իր անհիմն պնդումներից Թուրքիայի դէմ», - ասել է Օղանը՝ յաւելելով. «Թէեւ ԱՄՆ-ը որոշ պահանջներ է ներկայացնում այդ հարցում, Թուրքիան չի կատարի այդ պահանջները»:

Նշենք, որ խորհրդաժողովը արուել է online-ռեժիմով, ինչի պատճառով լրագրողները հնարաւորութիւն չեն ունեցել հարցնելու, թէ այդ դէպքում ինչու է արձանագրութիւնների տակ դրուած Թուրքական կողմի ստորագրութիւնը, յատկապէս եթէ դրանք յարաբերութիւնների կարգաւորում են պահանջում առանց նախապայմանների:

Նշենք, որ հայ-թուրքական արձանագրութիւնները ստորագրուել են 2009թ. Հոկտեմբերի 10-ին Յիւրիխում: Սակայն վաւերացումը երկու երկրների խորհրդարաններում առայժմ տեղի չի ունեցել:

ԲՐԻՏԱՆԻԱՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ՝ ՄԱՔՈՒՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեծ Բրիտանիան ողջունում է Հայաստանի իշխանութիւնների՝ առաւելապէս մաքուր եւ թափանցիկ ընտրութիւններ անցկացնելու մտադրութիւնը: Այդ մասին յայտարարել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Չարլզ Լոնսդէյլը Նոյեմբերի 14-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում:

«Մենք ողջունում ենք Հայաստանի նախագահի եւ վարչապետի յայտարարութիւնն այն մասին, որ առաջիկայ ընտրութիւնները պէտք է լինեն ամենաթափանցիկ ու արդարը Հայաստանի պատմութեան մէջ: Դա հրաշալի հնարաւորութիւն է ցոյց տալ զարգացումը դեմոկրատացման գործում», - նշել է դեսպանը՝ յաւելելով, որ Եւրոպական Միութիւնը մտադիր է օժանդակել այդ ձգտմա-

նը: Նա խրախուսել է ընդդիմութեանը կազմակերպել ուժեղ քարոզչութիւն:

«Ուրախ կը լինենք, եթէ յայտարարութիւնները իրականացուեն», - շեշտել է պատգամաւորը՝ յաւելելով, որ դա նպաստելու է նաեւ երկկողմ եւ բազմակողմ յարաբերութիւնների զարգացմանը: Նրա խօսքով, Մեծ Բրիտանիան, ինչպէս նաեւ ԵՄ-ի այլ գործընկերները ակտիւ մոնիթորինգ են անցկացնելու, ընդ որում խօսքը երկարաժամկէտ մոնիթորինգի մասին է:

Ներքաղաքական իրադրութեան ենթատեքստում դեսպանը յայտարարել է, որ 2008-ի մարտի 1-ի իրադարձութիւնները մեծ ազդեցութիւն են թողել քաղաքական միջնորդարի եւ գործընթացների վրայ:

ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՅՎԵՏԱՆԱ ՓԱՍՔԱԼԵԻԱՅԻ »ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՔԵՐԸ«
ՇԱՐԺԱՆԿԱՐԸՐ ՎԵՑ ԼԵԶՈՒՈՎ
ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԱՅՆ ԳԻՆԸ, ՈՐ ՎՃԱՐՈՒԱԾ Է
ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հայերուն հարազատ պոլիկա-
րուհի Յվետանա Փասքալեա եկող
շաբաթ պիտի ներկայացնէ երեքու-
կէս ժամ տեւողութեամբ իր եօթ
շարժանկարը, որ կը պատմէ դա-
րաբաղեան հակամարտութեան
պատմութիւնը՝ սկիզբէն մինչեւ
Շուշիի գրաւումը, վեց լեզուով:
«Ղարաբաղի վէրքերը» խորագի-
րով այս շարժանկարի տեսագրու-
թիւնները մշակուած են լաւագոյն
սարքերով ԱՄՆ-ի մէջ, ուր անիկա
արտօնագրուած ու թողարկուած է:
Այս պահուն այս շարժանկարը
արցախեան հակամարտութեան
պատմութեան մասին եզակի նա-
խաձեռնութիւն է. հաղորդեց Հ1
հեռուստատեսութեան կիրակնօր-
եայ «Առաջին լրատուական»ը:



Յվետանա Փասքալեա

գացման մէջ», - ըսած է ան:
Չորրորդ շարժանկարը կ'անդ-
րադառնայ հայկական փոքրաթիւ
Չոկատներէն ազգային բանակի կազ-
մաւորման: Հինգերորդը կը ներ-
կայացնէ զինուորագրուած մտաւո-
րականները՝ տարբեր բնոյթի եւ
մասնագիտութիւններու տէր մար-
դոց, որ ձգած էին իրենց կեանքն
ու մարտի դաշտ եկած:

«Երբ ես «Վեստի»ով ցոյց
տուի, թէ ինչ կը կատարուէր
Շահումեանի մէջ, ատիկա պարզա-
պէս տեղեկատուական բնոյթ ու-
նէր: Ես ցոյց տուի, թէ ինչպէս
խորհրդային բանակը ատրպէյճա-
նական օմոնի հետ կը տեղահանէ
հայկական բնակչութիւնը իր հողե-
րէն», - լիշեց հեռուստալրագրո-
ղուհին:

Շարժանկարի շարքի եօթ մա-
սերը կը ներկայացնեն հակամար-
տութիւն՝ ըստ ժամանակագրու-
թեան եւ ռազմավարական փուլե-
րու: Առաջին մասը՝ «յոյսի բար-
ձունքները» (1991) Շահումեանի
բարձունքներու եւ երբէք չմեռնող
յոյսի մասին է:

Երկրորդը շրջափակման դա-
ժան շրջափուլի մասին է, երբ
արդէն յանձնուած էին Շահումե-
անն ու Մարտակերտը, եւ ամե-
նօրեայ ռմբակոծութիւնները աւե-
րակ դարձուցած էին Ստեփանա-
կերտը:

«Իմ թանկագին ողջեր ու
մեռածներ» բաժինին մէջ ան պատ-
մած է պատերազմի մասին՝ առանց
ռազմական գործողութիւններու՝ ծե-
րերու եւ երեխաներու, որբերու եւ
այրիներու կեանքը երկրին մէջ,
ուր պատերազմ է: «Ես այն ժամա-
նակ շատ միամիտ էի, կը կարծէի,
իմ պատրաստած նիւթերս ու հա-
ղորդած լուրը կրնան որեւէ բան
փոխել իրադարձութիւններու զար-

Վեցերորդը կը ներկայացնէ
հրադադարի շրջանը՝ աւերակնե-
րէն մաքրուող քաղաք, վերակա-
ռուցուած ծննդատուն ու նորա-
ծիններու կտրուկ աճ: Իսկ իբրեւ
ամփոփում՝ կը ներկայացուի Շուշիի
ազատագրումը: «Այսօր, քան տարի
անց, ես կրնամ իւրօրինակ հաշ-
ուետուութիւն տալ: Այս հաշուետ-
ուութեան ես մօտեցած եմ առանձ-
նապատու պատասխանատուութեամբ,
իւրաքանչիւր բառի եւ պատկերի
տակ կրնամ ստորագրութիւնս
դնել», - ըսած է Փասքալեա:

Վեց լեզուներով ներկայացուող
շարժանկարներու այս շարքը, ըստ
հեղինակին, մեծ ազդեցութիւն պի-
տի ունենայ միջազգային հանրու-
թեան կարծիքին վրայ: Սակայն ան
առաւել կարեւոր կը համարէ այն
ուղերձը, որ պիտի ստանայ հայ
երիտասարդը այս պատմութեան, քա-
նի որ «պէտք է իմանալ այն գինը,
որ վճարուած է Արցախի ազատագ-
րութեան համար»:

ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ 80 ՏՈՎՈՍԸ

Շարունակուած էջ 1-էն
եւ փորձած են պարզել՝ արդեօք
համաշխարհային տնտեսական

ճգնաժամը ազդած է շուկայական
տնտեսութեան հանդէպ պարզ քա-
ղաքացիներու ունեցած մօտեցում-
ներուն: Հայաստան մէջ մասնաւոր

ԻՐԱՆՅԻ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ.
ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՍԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԿՆԵՈՒՄՑ ԱՌԱՋ ԱՏՐՊԵՅՃԱՆ ԱՆՈՒՆՈՎ ՊԵՏՈՒԹԻՒՆ
ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ

«Գիւլիխտանի եւ Թուրք-
մենչաչի պայմանագրերի կնքու-
մից առաջ Ատրպէյճան անունով
պետութիւն գոյութիւն չի ունե-
ցել»:

Այդ մասին իրանական
«Արանիւիւզ-իւ» կայքի հաղորդ-
մամբ՝ Թաւրիզում Ատրպէյճանին
նուիրուած երրորդ գիտաժողովի
ժամանակ յայտարարել է իրանցի
մտաւորական Մեհրի Նալբանդին:

Իրանցի մտաւորականը, անդ-
րադառնալով ներկայիս Ատրպէյ-
ճանի Հանրապետութեան պատմու-
թեան թեմային, նշել է. «Մինչեւ
Գիւլիխտանի եւ Թուրքմենչաչի պա-
յմանագրերի կնքումը Ատրպէյճան
անունով անկախ պետութիւն գո-
յութիւն չի ունեցել եւ ներկայիս
Ատրպէյճանի տարածքը ընդգրկ-
ուած է եղել իրանի կազմում,
այնուհետեւ տարբեր պատճառնե-
րով անջատուել է իրանից»:

Յիշեցնենք, որ իրանցի մէկ
այլ գիտնական Վալի Ջեբարին
օրերս Թաւրիզում կայացած Ատր-

պէյճանին նուիրուած երկրորդ գի-
տաժողովի ժամանակ, անդրադառ-
նալով պատմութիւնն աղաւաղելու
Ատրպէյճանի քաղաքականութեա-
նը, նշել էր. «Ատրպէյճանն անտե-
սելով պատմական իրողութիւննե-
րը, պնդում է, որ Ղաջարների
դինաստիայի օրօք Ռուսաստանի
եւ իրանի միջեւ կայացած համա-
ձայնութեան արդիւնքում իբր Ատր-
պէյճանը բաժանուել է իրանի եւ
Ռուսաստանի միջեւ, մինչդեռ այդ
ժամանակ Ատրպէյճան անունով
անկախ պետութիւն ընդհանրապէս
գոյութիւն չի ունեցել: Ներկայիս
Ատրպէյճանի Հանրապետութեան
տարածքը պատմական Արանի տա-
րածքն է ընդգրկում, որը եւս
գտնուել է իրանի ազդեցութեան
ոլորտում: Ատրպէյճանում պանա-
զերիզմի գաղափարախոսութեան
չնորհիւ կեղծ քարտէզներ եւ աղա-
ւաղուած պատմական փաստեր են
ներկայացնում դպրոցական աշա-
կերտներին եւ ուսանողներին»:

Panorama.am

ՀԱՅ ԲԵԻԵՈՒԱԽՈՅՁԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՍ
ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է

Հայագրի յայտնի բեւեռախոյզ,
Ռուսաստանի Պետական դումայի
նախկին պատգամաւոր Արթուր
Զիլինկարովը նշանակուած է Ռու-
սաստանի Դաշնութեան խորհուր-
դի անդամի պաշտօնին՝ Տուլայի
մարզէն: Ինչպէս կը հաղորդեն
ռուսական լրատուամիջոցները, հա-
մապատասխան կարգադրութիւնը
ստորագրած է Տուլայի մարզի
նահանգապետ Վլատիմիր Կրուզ-
տեւ:



Արթուր Զիլինկարով

Ռուսաստանի խորհրդարանի
Վերին պալատին մէջ Զիլինկարով
կը փոխարինէ Անատոլի Վասզովը,
որուն լրագորութիւնները, այնպէս
պատճառներով, 2011 Հոկտեմբե-
րին վաղաժամ դադարեցուած էին:

Նախապէս, Զիլինկարովը վա-
ղաժամ վար դրած էր Պետական
դումայի պատգամաւորի իր լրա-
գորութիւնները եւ Տուլայի մարզի
Ալեքսինի շրջանի քաղաքապետա-
կան ժողովի պատգամաւոր ընտր-
ուած՝ Սոլոբեւնի գիւղի խորհուր-

դէն: Ընտրութիւնները աւարտած
էին Զիլինկարովի անվերապահ յաղ-
թանակով. անոր օգտին քուէար-
կած են բնակիչներու 99,7 տոկոսը:

սեփականութեան եւ անհատ ձեռ-
ներէցութեան ի նպաստ հանդէս
եկած են հացախոյզի մասնակցող-
ներու մօտ 50 տոկոսը. 2006-ին
այդ ցուցանիշը շուրջ 35 տոկոս էր:

Հետազօտութեանն նաեւ պարզ
կը դառնայ, որ շուկայական տնտե-
սութեան հանդէպ ժխտական սկսած
են վերաբերիլ յատկապէս Եւրոպա-
կան Միութեան նոր անդամները:

Authorized Broker **SERVING SINCE 1975**
blue  **BEDROS S. MARONIAN** 
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association
(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
երբեք ռիճ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Պէյլանի Հայրենակցական Միութեան համար յիշատակելի թուական մը եղաւ Շաբաթ Նոյեմբեր 5, 2011: Արդարեւ, այդ օր երեկոցեան խուռներամ բազմութիւն մը փութացած էր Կլենտէյլի Հանրային Գրադարանը, միատեղ նշելու միութեան հիմնադրութեան 25-ամեակը:

Յովիկ Գրիգորեանի կատարմամբ ԱՄՆ-ի եւ Հայաստանի մաղթերգներու ունկնդրութենէն ետք օրուան հանդիսավար վարսեր Մարգարեան Չերմօրէն ողջունեց ներկաները եւ ապա հրաւիրեց Միութեան ատենապետ Տիգրան Սարաֆեանը: Ան իր խօսքին մէջ ըսաւ թէ միութիւն մը խօսքով չէ որ պիտի արդարացնէ իր գոյութիւնը, այլ գործնական արդիւնաւէտ աշխատանքով կ'արժեւորէ զայն: Մենք այսօր ձեզի կը ներկայանանք առատ բերքով, որուն ապացոյցը կը տեսնէք քիչ ետք:

Այնուհետեւ տեսաերիզի միջոցով ներկաներուն փոխանցուեցաւ Վահէ Արք. Յովսէփեանի, դերասան Ա. Խաչատուրեանի, Տիգրանուհի Պոզապալեանի եւ Վահան Գէորգեանի ողջոյնի խօսքերը:

Միութեան ատենապետ Տիգրան Սարաֆեան հանգամանօրէն ներկայացուց օրուան գլխաւոր բանախօսը՝ լոնտոնահայ ծանօթ գրող, կրթական եւ հասարակական գործիչ Ասատուր Կիւզէլեան: Ան որպէս Պէյլանցի, նախ շնորհաւորեց Միութեան 25 ամեակը եւ ապա յարեց «Ինծի համար մեծ պատիւ եւ հաճոյք է այսօր, հայրենակիցներու եւ անոնց բարեկամներուն հետ նշել այս ուրախ առիթը: Վստահ եմ աշխարհացրիւ բոլոր պէյլանցիները պիտի միանան ինծի, իրենց շնորհակալութիւնն ու գնահատանքը յայտնելու այն ազգանուէր պէյլանցիներուն, որոնք քսանհինգ տարիներ առաջ հիմնեցին Պէյլանի հայրենակցական Միութիւնը, նպատակ ունենալով միացեալ ուժերով ծառայել հայրութեան եւ մայր Հայրենիքին»:

Ասատուր Կիւզէլեան գնահատանքով անդրադարձաւ Վ. Կիւզէլեանի երկարամեայ տքնա-

շան աշխատանքի արդիւնքն եղող «Պէյլանի Բարբառը» գիրքի հրատարակութիւնը, որ իր պատուաւոր տեղը գրաւեց հայ բարբառագիրտութեան պատմութեան մէջ:

Յարգելի բանախօսը հակիրճ ակնարկով մը ներկաներուն ծանօթացնելէ ետք պատմական Պէյլանն ու շրջանի հայրութեան ազատագրական պայքարի ուղին՝ եզրակացուց «Ժամանակը եկած է որ Սփիւռքի բոլոր կազմակերպութիւնները օղակուելով իրարու, դառնան համազգային համագործակցութեան գորաւոր շղթայ մը: Համագործակցաբար եւ բռնցքուած ուժերով աշխատինք պաշտպանել մեր ազգային իրաւունքներն ու շահերը»:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Պէյլանի եւ պէյլանցիներու քառորդ դարու հայրենանուէր գործունէութեան մասին պատմա-վաւերագրական տեսաերիզ մը (պատրաստութիւն Յ. Ֆոտուլեանի):

Գործադրուեցաւ զեղարուեստական ճոխ յայտագիր մը, մասնակցութեամբ յայտնի արուեստագէտներ՝ Ռազմիկ Մանսուրեանի, Յովիկ Գրիգորեանի (երգ), Յարութ Յակոբեանի (երգ) եւ Ալիս Գաբրիելեանի ու Յարութ Ֆոտուլեանի (ասմունք):

Եկած էր պահը պարգևատրումի: Բեմ բարձրացան Պէյլանի Հայ. Միութեան բոլոր հիմնադիրներն ու հին ու նոր վարչականները, որոնք չուշատախտակներ ստացան ձեռամբ օրուան նախագահ Ա. Կիւզէլեանի եւ վարչութեան ատենապետ Տ. Սարաֆեանի: Յատուկ շուշանուէրով մը պատուընկեցաւ նաեւ Ասատուր Կիւզէլեանը:

Սոյն ոգեւորիչ եւ յիշարժան միջոցառումն աւարտեցաւ հիւրասիրութեամբ: Ներկաները սրահէն բաժնուեցան հայրենակցական ինքնատիպ երեկոյ մը վայելած ըլլալու գոհունակութեամբ:

Շնորհաւոր արծաթեայ յոբելեան:

Բարի երթ դէպի այլ տարեդարձներ:

Գ. Մ.

ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԸ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐԱ



ՄԱՅՏԱ ԲԱՐՈՒՄԵԱՆ

Հայ վարժարանը այն կուռանն է, որ հայ մանուկին հոգեմտաւոր անունդին հետ զուգահեռ անոր մէջ կը ներարկէ ազգային ոգին, ազգային արժէքներու հանդէպ սէրն ու յարգանքը մշակութային մեր հարստութիւնները փոխանցելով անոր: Մշակոյթը անհատի մը, ընկերութեան մը դիմագիծ եւ ինքնութիւն պարզեւորն է: Մշակոյթով է, որ մենք կը պահպանենք մեր ինքնութիւնը, երբ չկայ մեր ոտքին տակ հայրենի հողը եւ համաշխարհայնացման այս դարուն, հայօրէն ապրելը մարտահրաւէր մը կը դառնայ մեզի համար: Գիտակցելով ասոր, իւրաքանչիւր հայկական վարժարան հայ մշակոյթն ու առաջին ուսուցիչին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի իրագործումը կը տօնախմբէ հանդէսներով:

Կազմակերպութեամբ վարժարանիս Հայերէնի եւ Երաժշտութեան բաժանմունքներուն եւ մասնակցութեամբ 1-5 կարգի աշակերտներուն, Հոկտեմբեր 28, 2011ին, Սահակ Մեսրոպ վարժարանի շրջափակէն ներս, տեղի ունեցաւ Մշակոյթի ամսուան հանդիսութիւնը: Բացման խօսքով հանդէս եկաւ Հայերէնի ուսուցիչ՝ Տիկ. սոնա Պատալեանը, զոր յիշելէ ետք տօնակատարութեան առիթը կոչ ուղղեց աշակերտներուն միշտ հայերէն խօսելու:

Յայտագիրին առաջին մասով բեմ բարձրացան մանկապարտէզի աշակերտները, որոնք արտասանեցին «Դպրոց Կ'երթամ» Տիկ. Սիւզի Պաղտոյեանի առաջնորդու-

թեամբ եւ իրենց մատղաշ ձայներով երգեցին «Աշուն Եկաւ Պտղաբեր» երգը, ղեկավարութեամբ՝ Պրն. Արտաշէս Սինանեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ՝ Տիկ. Ժաննա Սինանեանի:

Ապա յաջորդաբար ելոյթ ունեցան առաջինէն չորրորդ կարգի աշակերտներու հետեւեալ երգացանկով՝ «Արի Արի Ջան Աշուն», «Լուսն Եկաւ», «Աշուն Եկաւ», «Գիրք», «Նուբար-Նուբար», «Հոյ Նագան», որուն միացան մեր Դ. կարգի հեգաճկուն աշակերտուհիները նազ պարով մը: Վերոյիշեալ կարգի աշակերտները, փոխն ի փոխ հայոց լեզուին նուիրուած քերթուածներով գովերգեցին մեր մայրենին:

Գեղարուեստական յայտագրի վերջին բաժնով Ե. կարգի աշակերտները տրամախօսութեամբ մը ներկայացուցին հայ գիրերու գիւտի պատմութիւնը:

Վարժարանի տնօրէն՝ Պրն. Յովսէփ Ինճեճիքեան, հուսկ բանքով շնորհակալութիւն յայտնեց, օրուան յայտագրին իրենց մասնակցութիւնը բերած ուսուցիչներուն եւ աշակերտներուն, ու իր կարգին անդրադարձաւ հայ լեզուի պահպանման եւ Մեծն Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիւտին կենսական դերին:

Նոյն երեկոյ աշակերտական յայտագրէն մաս մը, ինչպէս նաեւ վարժարանի տնօրէնին հետ, Հայ Մշակոյթին նուիրուած հարցազրոյց մը, հեռավարուեցաւ Փաստինա Քաղաքի Հանրային հեռուստակայանէն:

ԱՐՑԱՒԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՊԱՐԳԵԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԳԷ ԵՒ ՔԱՐՈՁԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՍՐԲՈՑ ՂԵՒՆԴԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐ 20, 2011

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տերտերեանի հրաւերով, Արցախի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմէ Գոհաբանութեան Տօնին Օրը աւանդութիւն դարձած նուիրահաւաքի (թելեթօնի) մասնակցութեան համար Լոս Անճելըս պիտի գտնուի, Կիրակի, Նոյեմբեր 20ին պիտի պատարագէ եւ քարոզէ Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ: Արարողութեանց պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Սուրբ Պատարագին ներկայ պիտի գտնուին Արցախի Նախագահ՝ Տիար Բակօ Սահակեան եւ պետական բարձրաստիճան պաշտօնեաներ:

Ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 9:30ին, իսկ Սուրբ Պատարագը՝ 10:30ին:

3325 North Glenoaks Boulevard, Burbank, CA 91504

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆ

ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՅ ԳԻԼԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 150 ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Հայ իրականութեան եւ քաղաքական մտքի պատմութեան մէջ Ստեփան Սապահ Գիլեան եղած է այն հազուագիւտ անձնաւորութիւններէն, որոնց կեանքն ու գործունէութիւնը նոյնացած է իր ժողովուրդին եւ պատկանած հաւաքականութեան պատմութեան: Այսպիսի վաստակաւոր նուիրեալի մը ծննդեան հարիւր չիսնամեակին առիթով, Ս.Գ. Հ. Կուսակցութեան Սապահ Գիլե մասնաճիւղը Ուրբաթ, 28 Հոկտեմբեր 2011-ի երեկոյեան, Հ.Կ.Մ.-ի Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէճի Արմէն եւ Բերսաբէ Ճէրէճեան սրահին մէջ կազմակերպած էր արժանավայել հանդիսութիւն մը:

Ի ներկայութիւն, Ս.Գ. Հ.Կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամ եւ պետական երեսփոխան ընկեր Սեպուհ Գալփաքեանի, Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ Ընկեր Տոքթ. Մարտիկ Ժամկոչեանի եւ ներկայացուցիչ ընկերներու, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի Շրջանային ատենապետ Յարութիւն Երկանեանի, Պէջրուլթի քաղաքապետութեան անդամ տիրար Արամ Մալեանի, Նոր Հաճնոյ Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Նարեկ Քհնյ, Հեճինեանի, կուսակցական մասնաճիւղերու, միութիւններու, կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներու եւ գաղափարական ընկեր, ընկերուհիներու, ազգայիններու ներկայութեան, հանդիսութիւնը սկսաւ Լիբանանի, Հայաստանի եւ Մայր Կուսակցութեան



քայլերգերու յոտնկայս ունկնդրութեամբ: Յանուն Սապահ Գիլե մասնաճիւղի վարչութեան, ընկեր Հրաչ Սիւրմենեան բարի գալուստ մղթեց ներկաներուն եւ ներկայացուց օրուան խորհուրդը: Ան ըսաւ, թէ Սապահ Գիլեան եղած է հեռատես, խիզախ եւ պայծառամիտ ղեկավար մը: Անոր կեանքն ու գործունէութիւնը խորհրդանշէ են հայրենասիրութեան, հաւատարմութեան ու գոհողութեան: Ան ըսաւ, Մենք, Սապահ Գիլեանի ժառանգորդներս, այսօր եկած ենք վերահաղորդուելու անոր պատգամներով եւ շարունակելու անոր կիսատ լքած աշխատանքը»:

Հանդիսավար ընկերը բեմ



Unlike many newspaper editors, media associations believe that the Civil Code clause does not violate the Armenian constitution and must simply be modified or properly enforced by courts.

Shushan Doydoyan of the Yerevan-based Freedom of Information Center, called Tuesday's court ruling "an important but insufficient step." "It doesn't solve the problem because right from the beginning the ombudsman should have appealed to the National Assembly, rather the Constitutional Court," she told RFE/RL's Armenian service.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՅԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՂՂԱՓՈՒԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏԵՍԱՆԿԻՒՆԷՆ ԴԻՏՈՒԱԾ

ԴՈՒՏ. Տ. ՋԱԻԷԳ Ա.Ի. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆՆԵԱՆ

ՅԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՄ

Թէեւ 1910 թուականին էտին-պուրկի մէջ սկիզբ առաւ Եկեղեցիներու Միութեանական Շարժումը իր սաղմնային վիճակին մէջ, անոր պաշտօնական հիմը դրուեցաւ Ամսդերտամ քաղաքին մէջ 1948 թուին որպէս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդ (ԵՀԽ), որ ցարդ իր ծաւալուն աշխատանքը կը կատարէ ժընեւի իր կեդրոնէն ներս առաւել կամ նուազ հետաքրքրութիւն ստեղծելով միջազգային գետնի վրայ, հետզհետէ դժբախտաբար աւելի նուազ քան առաւել կարեւորութիւն ստանալով տուեալ աշխարհիկ իշխանութիւններէն, թէեւ յաճախ արդիւնաւոր դառնալով իր բարեփոխական նպատակներուն մէջ որ քան կարելի է:

ԵՀԽ-ի եկեղեցիներու «միութեանական» շարժումին մէջ Արեւելեան կամ ծիսական եկեղեցիներու գործօն մասնակցութիւնը սկիզբէն ի վեր անորոշ բնոյթ ունեցած է, դանդաղ յառաջդիմութեամբ, անշուշտ հիմնական կարգ մը պատճառներով:

Հասկնալի է որ եկեղեցիներու միութեան ձգտող այս շարժումին ռազմավարները Արեւմտաքի Անկլիկան եւ Բողոքական յարանուանութիւնները եղան, քանի որ անոնք 500 տարուան այսպէս կոչուած «բարեփոխեալ» կամ «բարեկարգեալ» յառաջընթացի մը մէջ դրած էին իրենք զիրենք, որոնք գործնականացուցին կրօնքը, պարզացուցին աստուածաբանութիւնը, գայն ժամանակավրէպ նկատելով, եւ քրիստոնէութիւնը գործնականապէս ի սպաս դրին մարդկային կեանքի բարուրդին: Հռոմէական Կաթոլիկ եկեղեցին պաշտօնապէս մասն եւ բաժին չէ ունենած ԵՀԽ-ին մէջ ներքոյիշեալ պատճառներով, եւ սակայն նոյն եկեղեցւոյ կարծր դիրքն ալ հետզհետէ մեղմացաւ եւ արտաքինապէս մօտեցաւ էքումենիք այդ մեծ շարժումին:

ՇԱՐՓՈՒՄԻՆ ԲՆՈՅԹՆ ՈՒ ՈՒՂՂԱՓՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԴԻՐՔԸ

Իր դրական ուղիի ընթացքին, նման նոր քայլ մը եկեղեցիին իր անմերձենալի դիրքերէն խոտարհեցուց, «ծառայի կերպարանը» զգեցաւ, եւ եկեղեցւոյ արձագանգը որ է «էքումենիք», լսելի դարձուց աշխարհին: Բառը յունարէն իր հիմունքով կը նշանակէ «տիեզերքի ամբողջական բնակութիւն», որ իր կարգին պիտի հաստատէր «ի սպաս հանուր աշխարհին դրուած եկեղեցւոյ ծառայութիւնը»:

Ուղղափառ եկեղեցիներ, ընդ որս նաեւ Հայաստանեայց Եկեղեցին որ պաշտօնապէս անդամագրուեցաւ 1962 թուականին Երջանկայիշատակ Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթոլիկոսի դիմումով, աւելի վերապահ եւ դանդաղ յառաջացում ցոյց տուին դէպի այս շարժումը՝ ներքին ազգային եւ մշակութային մտահոգութիւններէ մղուած: Անոնք իրենց գոյութիւնը անբախտելի կերպով կապած են իրենց ազգային բնոյթին հետ, եւ միշտ ալ դժուար եղած է բաժանման գիծը քաշել եկեղեցական եւ ազգային իրադրութեանց միջեւ:

Նոյն այս երեւոյթը շեշտուած էր հինէն ի վեր երբ Արեւելեան Ուղղափառներ կասկածանքով եւ վերապահութեամբ դիմակայած էին Հռոմէական Կաթոլիկ, Անկլիկան եւ Բողոքական յարանուանութեանց մերձեցումները, անոնց մէջ եւրոպական եւ ամերիկեան քաղաքական նպատակներ տեսնելով: Այս մտավախութիւնը պատճառ եղած էր որ միութեանական շարժումի առաջապահները պատրաստ եւ պատրաստակամ ընդունելութիւն չգտնէին ուղղափառներէն, որոնք չէին մոռցած անցեալի փորձը: Բարեբախտաբար ժամանակները փոխուած էին ու յարաբերութիւնները բնականոն դարձած եւ մտավախութիւնները մասամբ փարատուած:

Ակներեւ էր սկիզբէն որ դաւանաբանական կարեւոր հիմունքները այդ մերձեցումները վերածեցին պարզ հանդիպումներու եւ ժողովական սահմաններու մէջ պահեցին ուղղափառները, որոնք միշտ հաւատարիմ մնալով առաջին հինգ դարերու վարդապետական հարազատ ուսմանց, դիւրաւ համաձայն չեղան ԵՀԽ-ի արագ, աններդաշնակ, պատահական, եւ ապակեդրոնացած առաջադրանքներուն, որոնց կարծիքով քրիստոնէական ուղղափառ վարդապետութիւններն ու հանգանակները պիտի փոխանակուէին արդի ժողովավարական եւ ուսումնական ձեւաւորումներով:

Ուղղափառներու վերապահութիւնը կը բխէր նաեւ այլ կարեւոր պատճառէ մը, որն է այն մտավախութիւնը թէ արեւմտաքի մշակոյթը, խորթ եւ նորարար ու ընկերային հարցերով բեռնաւոր, կրնար հետզհետէ ազդել իրենց վրայ: Այլ խօսքով, կրօնքը եւ մարդկային կեանքի առօրեայ պահանջները յանուն քրիստոնէական բարոյական սկզբունքներու այնքան այժմէական եղան որ արեւելք ինքզինք պատրաստելու էր բարեփոխման եւ իր կրօնական հասկացողութեան ծիրը ընդլայնելու էր, աւանդականէն հեռանալով ու իր կրօնական եւ ազգային արժէքները տրամադրելով հասարակաց քրիստոնէական կեանքին՝ առանց սահմանափակումներու:

Ուղղափառներ անշուշտ կոչը չէին ձեւանար եւ կը գիտակցէին թէ իրենց աստուածաբանական եզրաբանութիւնները զիրենք կղզիացուցած են ի դէմս արեւմտաքի լայնախոհութեան որ գործնական պատմութեան զգեցուցած էր կրօնական ոգիին: Իսկ խօսելով Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ դիրքորոշման մասին, ինչպէս ըսուեցաւ, անոնք սկիզբէն չեն մասնակցած միութեանական շարժումին, անոր մէջ տեսնելով առաւել քայքայում եւ աշխարհականացում, ինչպէս նաեւ նուիրապետական եւ վարչական կառուցներու մերկացում, ծիսական եւ դաւանաբանական հերձուած, երբ մանաւանդ նկատի ունենանք Հռոմի կարծեցեալ եւ մոռացեալ յայտարարութիւնը թէ «արտաքոյ հռոմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն»: Հռոմ ո՛չ մտահոգուած է եւ ո՛չ ալ հետաքրքրուած իրմէ դուրս կատարուած միութեանական որեւէ շարժումով, քանի որ երբ եկեղեցիներու «միութիւն» մը պիտի գոյանայ, այդ իրենց հաշուով կրնայ կատարուիլ

միայն «վերադարձով» բոլորին որոնք «անջատուած» են Հռոմէն:

ԽՈՏՈՐ ՅԱՍԵՄԱՏՈՒԹԻՄ

ԵՀԽ-ի շարժումը սկսաւ յայտնի դարձնել այն ինքնաձին սկզբունքը թէ «Եկեղեցին ինքզինք պէտք է գտնէր, ինքնիրմէն դուրս ելլելով եւ իրենները փնտտելով ու անոնց միանալով»: Այսքանը խոստովանելի հեշտ է, արդար եւ ընդունելի, սակայն գայն գործարելն է դժուար եւ բարդ, նայած թէ ինչն է բուն նպատակը՝ միաձեւութիւն, թէ միութիւն: Առաջինը արտաքին է եւ ոչ կենսական, իսկ երկրորդը՝ ներքին, վարչական եւ մանաւանդ նուիրապետական:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին առաջնորդող տարրին միտքը վերջին հաշուով ո՛չ միաձեւութիւն եղած է եւ ո՛չ ալ միութիւն, այլ հանդիպումի կէտ մը: Անոնց մեկնաբանութիւնն աւելի վերացական է, թէ իրաւ «միութիւնը» արդիական եւ թեթեւ մերձեցում մըն է, այսինքն, եկեղեցիներու միջոցաւ որոնուած ճշմարտութեան ուղիներու միացման կէտն է, հանդիպման ողջոյնի տեղը, ուր եկեղեցւոյ զօրութիւնը իր միութեամբ երեւան պիտի գայ աշխարհին՝ ի սպասաւորութիւն:

Սա կը նշանակէ թէ ան խմբաւորում մըն է որ վարչականէն գուրկ է, տարբեր յարանուանութիւններու միջեւ սիրալիբ հանդիպում մըն է, եւ քրիստոնէավայել յարգանքի անկեղծ ցոյց մը՝ իրարու նկատմամբ, համագործակցութեամբ եւ սակայն գուրկ եկեղեցական կանոնական հիմունքէ: Հոս է որ

անոնց դիրքը խոտոր կը համեմատի ուղղափառ եկեղեցիներու դիրքին հետ իրական «միութեան» մը յանգելու համար որ յայտնապէս կարելի չէ:

Այս պարագային, կ'ըսեն, պայման չէ նուիրապետական միութիւնն ու ծիսական միաձեւութիւնը իր վարչական ու կանոնական պահանջներով, որ ինքնին խոտոր համեմատութեամբ կը հաստատէ որ եկեղեցիներու «միութիւն» մը անկարելի է, եւ անոր փոխարէն եկեղեցիներու միջեւ համագործակցութիւն մըն է որ կը մնայ ժողովական որոշումներու ուժին մէջ միայն: Երկուքը սակայն իրարմէ տարբեր բաներ են: Կը մնայ միայն տիեզերական այն հասկացողութիւնը թէ ազգային, վարդապետական, մշակութային եւ ծիսական գունաւորումները տեղական ծագում եւ զարգացում ունենալով զգեստաւորներ են սուրբ եկեղեցին որպէս «զարդ» եւ գեղեցկացուցեր, ժողովուրդներու աշխարհագրական եւ ազգայնական այլազանութեան դրոշմ դնելով անոր վրայ:

ՈՒՂՂԱՓՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԴԻՐՔԸ

Միութեանական շարժումին մէջ ուղղափառներու նախնական մասնակցութիւնը իր դրական հակաշիւրը ունեցած է «Հաւատքի եւ կարգի» խորհրդաժողովներու ընթացքին, ինչպէս առաջին անգամն ըլլալով Լոզանի ժողովին գլխաւոր օրակարգը եղաւ 1927 թուականին:

Շաբ.ը էջ 18

Ֆ.Ք.Ս.Մ. ՄՐՏՄԻԱԾԴ ԹԱՏԵՐԱՆՈՒՄ

ԱՆՐԵԻ ԾԻԾԱՂ

Կուսակցութիւն 2 արաբով

Հեղինակ ԵՐՈՒՆԳ ՕՏԵԱՆ
Բեմադրիչ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Շաբաթ, Նոյեմբեր 5, 19, 26
ժամը 8:00-ին

Կիրակի, Նոյեմբեր 6, 13, 20, 27
ժամը 5:00-ին

Շաբաթ, Դեկտեմբեր 3, 10
ժամը 8:00-ին

Կիրակի, Դեկտեմբեր 4, 11
ժամը 5:00-ին

Մուտքի Լուր՝ \$20

ԴԵՐՄԱՍՏՐԱՆԵՐ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ, ԱԼԵՍ ԽՈՐԿԻՏԵԱՆ, ՈՈՒԲԷ ՅԱՐԱՆՏԱՅԵԱՆ,
ՄՐԻ ԼՊՊՐԻՏԵԱՆ, ՄՐՓԻ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, ՆԱՐԷԷ ՄԻԿԵԼԵԱՆ, ՄՐՓԻ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ,
ՄՐԱՍ ՄՈՒՐԵԼՅԱՆ, ՎԱԳՕ ՆԱԶԱՐ, ԳՐԻԳՈՐ ՍԻՄՈՆԵԱՆ, ԹԱԼԷ ԳԱԼԱՍՏԱՐԵԱՆ,
ԱԼԻՆ ԽՈՒՆԵԱՆ, ՈՒՍԷԼ ՔՈՐՍԵՂԵԱՆ, ՆԱՅԻՐԻ ԽՄԻՐԵԱՆ,
ԱԼԻՆ ՊԱՐՈՆԵԱՆ, ՍԱՏՊԿ ՍԻՆԱՆԵԱՆ

Ֆ.Ք.Ս. ՓԱՍՏԻՆԱՅԻ ԿԵՐՈՆԵՆ ՄԻՋ
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել Ֆ.Ք.Ս. Միութեան Գրասենեակը
(626) 794-7942 կամ (626) 710-3805
itsmyseat.com
www.agbuca.org

ԴԵԿՏԵՄԲԵՐ 4-Ի ԵՆՈՅԹԸ ԿԸ ՀՈՎԱՆԱՒՈՐԷ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ
(Շարունակում ըստ խորհրդի քիւէն)

Տարածաշրջանում հանգստութիւն ու խաղաղութիւն տիրեց: Բայց մենք չգիտէինք, որ կարճ ժամանակ անց բանդիտների երկու երրորդն ազատ են արձակուելու: Այնժամ Ռուսաստանի նախաձեռնութեամբ ՄԱԿ-ի համապատասխան ծառայութիւնները սկսեցին ապահովել ծովահէնների քրէական արդիւնաւէտ հետապնդումը:

Մենք արդէն ծովում էինք գտնուում, երբ իմացանք, որ անձամբ ՄԱԿի Գլխավոր քարտուղարին է յանձնարարուել եռամսեայ ժամկէտում գեկոյց ներկայացնել ծովահէնների քրէական հետապնդման կազմակերպման բոլոր տարբերակների մասին: Եւ ի՞նչ: Դէ, ոչ ինչ: Կարողում եմ փաստաթուղթով, որը լոյս է տեսել 2011 թուականի Ապրիլին Դուբայում «Հակածովահէնային համաձայնագրի» ընդունումից յետոյ («Արմենիան» այդ ժամանակ գտնուում էր հեռու-հեռու ինքնաշարժով): «Ծովահէնները միջին հաշուով չորս միլիոն տոլար փրկագին են ստանում իւրաքանչիւր նաւի դիմաց, իսկ իրենց գործողութիւններից իւրաքանչիւր վրայ ծախսում են 300 հազար ԱՄՆ տոլար: Շահույթի կէսից ակելին գնում է կաշառքների վրայ»: Աստուած իմ: Խեղճ ծովահէնիկներ: Ախր դա թաւան է օրը ցերեկով: Գոնէ կէսը վերցնէին թշուառ բանդիտներից, թէ չէ՝ կէսից ակելին: Չէ՞ որ պաշտօնական փաստաթղթերում սեւով սպիտակի վրայ գրում են (հաւանաբար՝ որպէս արդարացում), թէ ո՛չ Սոմալին, ո՛չ Եմենը, չեն գործում որպէս պետութիւններ, իսկ ծովահէնները, գիտէ՞ք, «օգնում են հաշմանդամներին, ծերերին ու որբերին»: Դէ լաւ, է՛լի: Անցնենք ակելի լուրջ տոնի: Եթէ միջազգային բարձր համաժողովում հետազօտողները տուեալներ են ներկայացնում այն մասին, թէ ծովահէնները որքան են ծախսում կաշառքների վրայ, ապա հաստատ գիտեն, թէ նրանք ում են վճարում: Նշանակում է, կարելի է հասկանալ, թէ ում է ձեռնառնում ծովահէնութիւնը: Հենց այնտեղ էլ՝ Դուբայում հնչեցրին ծովահէնութեան պատճառած գումարային համարժէքը. «Եթէ միջին հաշուով ծովահէնները միլիարդ ԱՄՆ դոլար՝ տարեկան»: Կան եւ այլ, ճշգրտուած տուեալներ՝ տասնհինգ միլիարդ տոլար: Կան տուեալներ նաեւ ծովահէնների «եկամուտի» մասին՝ մինչեւ տասը միլիարդ դոլար: Հաւատալս չի գալիս: Բայց եթէ նոյնիսկ մի քանի անգամ կրճատենք, միեւնոյնն է, դա սարսափելի է:

Մի բան անհասկանալի է ինձ: ՄԱԿի Անվտանգութեան խորհրդի որոշումների քօլի տակ ոչնչացնում են ամբողջ երկրներ, ամբողջ ժողովուրդներ, գետինն են հաւասարեցնում համաշխարհային ճարտարապետութեան գլուխգործոցներ: Եւ յանկարծ հօգր ծովային տէրութիւնները ՄԱԿ-ի դրօշի տակ չեն կարողանում հաշիւ տեսնել մի կոչո ծովային աւազակների հետ: Դեռեւս Շրի Լանքայում մեզ ասացին, որ գոհերի առիւծի բաժինը կազմում են առաջատար եւ շարժիչաւոր մարզանաւերը: Վերջնականապէս «ուրախացրին» մեզ: Անյոյս իրավիճակ: Արբանեա-

կային հեռախօսով զանգեցի Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին: Պատմեցի, թէ ինչ վիճակում ենք յայտնուել: Որոշ ժամանակ անց մեզ հետ կապուեց Հայաստանի անվտանգութեան խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարեանը, իսկ յետոյ՝ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը: Անիւր պտտուեց: Շուտով տեղեկացանք, որ Ռուսաստանի ռազմաւաւերը պատրաստ են ուղեկցել մեզ:

Ընդգծեցին՝ անվճար: Մենք այդ մասին պատմեցինք ցելլոնեան նաւահանգստային իշխանութիւններին, որոնց պէտք էր համապատասխան փաստաթուղթ: Հակառակ դէպքում թոյլ չեն տայ շարունակել երթուղին: Եւ յանկարծ ստանում ենք մղձաւանջային լուր. համաձայն ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի որոշման, ռազմաւաւերն ուղեկցում են միայն Ադենի ծոցի շրջանում: Բայց չէ՞ որ նախքան Ադենի ծոց կամ Սոմալիի ափեր հասնելը դեռ պէտք է անցնել ողջ Արաբական ծովը: Իսկ այնտեղ հիմա ուղղակի վիտում են ոչ միայն Սոմալիի, այլեւ Եմենի ծովահէնները: Հենց Արաբական ծովում խաղաղ նաւերի վրայ յարձակումների թուերն ակելի սարսափելի են, քան Սոմալիի ափերէրքին:

Եւ իհարկէ, կասկած չկայ, որ այս ամէնի մասին գիտեն ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում: Շրի Լանքայում միայն մենք չէինք գտնուում անեյնքի վիճակում: Մեր կողքին կառանուած էին եւս երեք առաջատար նաւեր՝ սպանական, սինգապուրեան եւ ֆրանսական դրօշներով:

Բոլորը պէտք է անցնէին Արաբական ծովը: «Արմենիան» առաջին ազատուեց գերութիւնից: Մեզ օգնեց գործարար, Ղ-Տելեկոմ ընկերութեան ղեկավար Ռալֆ Յիրիկեանը: Մեզ ուղեկցեց ոչ ռուսական նաւ, փոխարէնը՝ բացառապէս ռուսական անձնակազմով: Ես չեմ հասկանում, ի՞նչ գլուխ կոտրելու բան ունենք: Մի՞թէ պարզ չէ, որ քանի դեռ ծովահէնութիւնն ինչոր մէկին ձեռնառն է, անհար է դրա դէմ պայքարել: Եւ դա անելի վնաս է հասցնում Միաւորուած ազգերի կազմակերպութեան հեղինակութեանը:

Եւ այսպէս, մենք փրկուեցինք, չհաշուած իհարկէ կրած ապրումներն ու վիրաւորանքները:

Ողջ հոգով նողկանք էինք զգում, ծանօթանալով բազմաթիւ նիւթերին այն մասին, թէ ինչպէս են ծովահէնները ծանակում գերիներին: Յաւօք, մենք զրկուած էինք Սուդան եւ Եթովպիա այցելելու հնարաւորութիւնից, որտեղ կան հայկական համայնքներ եւ գործող եկեղեցիներ: Բայց ծրագրերն ու խնդիրներն իրագործեցինք Եգիպտոսում, որտեղ այդ օրերին չէին դադարում յեղափոխական ելոյթները Գահրէթում եւ Ալեքսանդրիայում, քաղաքներ, որ Սփիւռքի հարուստ պատմութիւն ունեն: Յաջողեցինք նկարահանել հայ մշակոյթի եւ տաճարային ճարտարապետութեան տասնեակ յուշարձաններ: Սեփական ականջներով լսեցինք «յեղափոխականների» կարգախօսները, որոնց այդքան ջանադրաբար սատարում է Ամերիկան:

Նրանք բացորոշ կոչ են անում երկրի երեսից իսպառ ջնջել բոլոր բուրգերն ու բոլոր սփինքաները:

Հենց այդպէս:

* * *

Սուէզի ջրանցք: Ծննդեան թուականը՝ 1869: Սուէզից մինչեւ Պորտ Սալիդ երկարութիւնը կազմում է 161 քիլոմէթր: Առանց որեւէ ջրափակոցների (շիւղաների) միացնում է Կարմիր ծովը Միջերկրականին, որի ջրերը մտնելով, «Արմենիան» երկամեայ նաւարկութիւնից յետոյ փակեց շրջանը: Կատարուեց: Մենք նորից Միջերկրականում ենք: Նաւում շամպայն չկար: Փոխարինեց թթի օղին: Ճիշտ է, մենք դեռ պէտք է հասնենք Կիպրոս կղզի, որտեղ երեսուն մեթրանոց կարմիր-կապոյտ-ծիրանագոյն դրօշ-առաջատարով «Արմենիային» կը դիմաւորեն Հայաստանի եւ Կիպրոսի նախագահները: Ահա այնտեղ էլ կ'իրագործուի շուրջերկրեայ նաւարկութեան պաշտօնական աւարտը:


Առաջին աշխարհաշուրջի աւարտման այս հեքիաթային, երջանիկ օրերին, արդէն նշելով ապագայ երկրորդի ծրագրերը, ես մտածում եմ նաեւ անցեալի մասին: Յիշում եմ, թէ ինչպէս, դեռ պատանի, կանգնած ռազմաւաւի տախտակամածին, հմայուած նայում էի բլուրաւոր ալիքներին, նրանցից իւրաքանչիւրում տեսնելով կենդանի էակներ: Յիշում եմ, թէ ինչպէս Ռիազանի բժշկական ինստիտուտի վեցերորդ կուրսում շրջանաւարտների նշանակման յանձնաժողովին զարմացրեց իմ ընտրութիւնը: Կամ չատկա, ինքնապէս անոս եւ տունդրա, ներծծուած հրաբուխների եւ հեյզերների ռոմանտիկայով: Եւ չէ՞ որ հենց այդպէս էլ ստացուեց: Հեռուոր թերակղզում գտնուելու տասը տա-

րիների ընթացքում լողացել եմ ոչ միայն առաջատար նաւով, այլեւ ձկնորսական մեծ սառնարանային նաւով, որտեղ աշխատում էի որպէս բժիշկ: Ինչ վերաբերում է հրաբուխներին եւ հեյզերներին, ապա այստեղ իմ ճակատագրում, ինչպէս ասում են, Աստուծոյ մատը խառն էր: Ինքնաշէն նաւակները, որոնցով կամչատկայի երկու ընկերներին հետ անցանք ակելի քան երեսուն հազար քիլոմէթր իՍՉՄ-ի գետերով ու լճերով՝ ինքնապէս օդակիրանոսից մինչեւ Բալթիկ ա, հենց այդպէս էլ կոչուում էին՝ «Բուլկան» եւ «Հեյզեր»: Իսկ «Արմենիային» ընդհանուր նաւասենեակում կախուած է «Կիլիկիա» առաջատար նաւակական լուսանկարը, յիշեցնելով նախորդ նաւարկութեան մասին Եւրոպայի շուրջ՝ եթէ ծովերով եւ Ատլանտիկայի մի հատուածով:

Եւ անհ հեռուում, ճերմակ մշուշի մէջ գծագրուած են կիպրոսեան Լիմասոլ նաւահանգստի ծանօթ ուրուագծերը: Մեզ դիմաւորում են հազարաւոր հայրենակիցներ, կիպրոսի յոյներ, Հայաստանի եւ Կիպրոսի նախագահները՝ Սերժ Սարգսեանը եւ Դիմիտրիս Սրիստոֆիասը: Ես, ինչպէս հարկ է գիտարշաւի պետին, նախագահին գեկուցում եմ շուրջերկրեայ նաւարկութեան աւարտի մասին: Երկու րոպէսում խօսում եմ ե՛ւ անցած երեք ովկիանոսների, ե՛ւ հինգ մայրցամաքների մասին, որտեղ ապրում են մեր միլիոնաւոր հայրենակիցներ, ե՛ւ Սփիւռքում նիւթերի հաւաքման, ե՛ւ այն մասին, որ գիտարշաւը նուիրուած է հայ մօրը, որն օտարութեան մէջ հային հայ

Շար.ը էջ 18

Աւանդութիւններու հիմքով կերտել պայծառ ապագայ



Հ. Բ. Ը. Մ.
Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկ

“ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ”
Ազգային Ինքնութեան եւ Նկարագիրի Կերտման Ծրագիր

Պարգեւատրում 2011-ի Մասնակիցներու
Ներկայացում 2012-ի Թեկնածուներու

Կիրակի, Նոյեմբեր 20, 2011
Ժամը 10:30 - 2:00

Արեւմտեան Թեմի Սրբոց Ղեւոնդեանց
Մայր Տաճարի մէջ
3325 N. Glenoaks Blvd., Burbank CA 91504

Գեղարուեստական Ցայտագիր եւ Մեծարանք
Ազգանուիրումի 2011-ի հիւր պատգամաբերներու

Ներկայացում եւ Ցուցադրութիւն
Արուեստագէտ
Daniel Horne Jacob-ի
Մեծարիր գեղատիպ խորհրդապատկերին ուր
ներկայացուած են հայոց պատմութեան
յատկանշական հերոսներն ու դուագները:

Հիւրասիրութիւն
Սիրալիր Հրաւեր Բոլորին



MISSION

WINE & SPIRITS

Please drink responsibly!

Like Us On facebook

facebook.com/missionliquor

AMAZING SELECTION & EVERYDAY LOW PRICES!

twitter.com/missionliquor

<p>JOHNNIE WALKER RED LABEL WHISKY 750 ML</p> <p>13⁹⁹</p>	<p>JOHNNIE WALKER BLACK LABEL WHISKY 750 ML</p> <p>21⁹⁹</p>	<p>JOHNNIE WALKER DOUBLE BLACK LABEL WHISKY 750 ML</p> <p>39⁹⁹</p>	<p>JOHNNIE WALKER GREEN LABEL WHISKY 750 ML</p> <p>41⁹⁹</p>	<p>JOHNNIE WALKER GOLD LABEL WHISKY 750 ML</p> <p>59⁹⁹</p>	<p>JOHNNIE WALKER BLUE LABEL WHISKY 750 ML</p> <p>139⁹⁹</p>
<p>STOLICHNAYA VODKA 1.75 L</p> <p>19⁹⁹</p>	<p>DEWAR'S 12 YR SCOTCH WHISKY 750 ML</p> <p>15⁹⁹</p>	<p>JACK DANIEL'S TENNESSEE WHISKEY 750 ML</p> <p>13⁹⁹</p>	<p>CHIVAS ROYAL SALUTE 21 YR SCOTCH WHISKY 750 ML</p> <p>119⁹⁹</p>		
<p>REMY MARTIN VSOP COGNAC 750 ML</p> <p>29⁹⁹</p>	<p>PUTINKA LIMITED VODKA 750 ML</p> <p>24⁹⁹</p>	<p>CORZO SILVER TEQUILA 750 ML</p> <p>29⁹⁹</p>	<p>CIROC VODKA 750 ML</p> <p>18⁹⁹</p>		
<p>TSAR ALEXANDER I VSOP COGNAC 750 ML</p> <p>18⁹⁹</p>	<p>JACQUES CARDIN VSOP COGNAC 750 ML</p> <p>13⁹⁹</p>	<p>NOY 7 YR ARMENIAN BRANDY 750 ML</p> <p>19⁹⁹</p>	<p>DON JULIO 1942 ANEJO TEQUILA 750 ML</p> <p>89⁹⁹</p>		
	<p>HENNESSY VS COGNAC 750 ML</p> <p>21⁹⁹</p>	<p>PATRON REPOSADO TEQUILA 750 ML</p> <p>32⁹⁹</p>			

★	Washington Blvd.	★	Glendale Blvd.	★	Burbank Blvd.
Fill Ave.	↑	Highland Ave.	↑	Woodman Ave.	↑
210 FWY	104 FWY	101 FWY	173 FWY		

PASADENA 1785 E. WASHINGTON BLVD. 626-794-7026
 GLENDALE 825 W. GLENOAKS BLVD. 818-242-0683
 SHERMAN OAKS 13654 BURBANK BLVD. 818-785-6529

STORE HOURS: MON - SAT, 9AM-8PM. (GLENDALE STORE OPEN SUNDAY 10AM-4PM)

SOUTHERN CALIFORNIA'S PREMIER WINE & SPIRITS SUPERSTORE!

AD PRICES MAY REMAIN IN EFFECT LONGER THAN THE TIME PERIOD INDICATED. WE RESERVE THE RIGHT TO LIMIT QUANTITIES. SALES TAX EXCLUDED. PRICES SUBJECT TO CHANGE WITHOUT NOTICE. AD PRICES GOOD FROM NOVEMBER 17TH - NOVEMBER 25TH, 2011.

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՈ՞Ւ ԿԵՐԿԱՐԱԶԳԷ ԱՍՈՒՐԻՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Եթէ գոյութիւն ունի բառ մը, որ կարենայ վախ չառաջացնել կարգ մը տղամարդոց սրտերուն մէջ, այն ալ «յանձնառութիւն» կոչուող բառն է: Բազմաթիւ տղամարդոց համար, այս պարզ բառը շատ աւելի մեծ նշանակութիւն ունի: Այս տեսակի պատկանող տղամարդիկ կրնան չափազանց սիրել իրենց ընկերակիցը եւ չփափաքիլ անկէ բաժնուիլ կամ ուրիշին հետ յարաբերութիւն ունենալ, սակայն «յանձնառութեան» մասին միայն մտածումը արդէն ահ կ'առաջացնէ անոնց մօտ: Հեւտեւաբար, անոնք տարիներով կը յետաձգեն նշանախօսութեան կամ ամուսնութեան քայլը եւ զանազան պատճառաբանութիւններ կը հնարեն բացատրելու համար կապուած չըլլալու իրենց պատրուակը:

Ընդհանրապէս այս տղամարդիկ օրինակ կը բերեն ձախողութիւն արձանագրած յարաբերութիւնները կամ իրենց ծնողքին ամուսնալուծումը, որ իրենց մտքին մէջ այլանդակած կ'ըլլայ ամուսնութեան նկարը: Ինչպէս նաեւ կրնան ըսել, թէ «իրենք իրենց յարաբերութիւնը կը սիրեն ինչպէս որ է»:

Ինչո՞ւ է այս վախը. ինչո՞ւ կարգ մը տղամարդիկ կը վախնան ամուսնական կապ հաստատելէ՝ իրենց ուրախ պահող անձին հետ: Արդեօք այս իրողութիւնը կը փաստէ՞, թէ մարդ արարածը անկարող է միայն մէկ անհատի կապուած ըլլալ: Կամ այդ փափոս է, որ խնդրոյ առարկայ անձը անկեղծօրէն չի սիրեր իր ընկերակիցը:

Իրականութեան մէջ, չատուկ եւ զանազան պատճառներ տղամարդոց կը մղեն տատամելու՝ յանձնառու ըլլալու որոշումն ու քայլը առնելէ առաջ: Այդ պատճառներէն ամէնէն տարածուածներն են հետեւեալները.

* Ազատութիւնն ու ընդարձակ ընտրութիւնները կորսնցնելու վախը:

* Յուսախաբուութեան եւ զգացական վնասի մատնուելու վախը, մանաւանդ եթէ ան գէշ փորձառութիւն մը ապրած է անցեալին:

* Պարտականութիւններու եւ պատասխանատուութիւններու ծովին մէջ խեղդուելու վախը:

* Յարմար որոշում առնելու դժուարութիւններ դիմակալելը, որովհետեւ կարգ մը տղամարդիկ դժուարութիւն կը գտնեն ուղիղ եւ յաջող որոշումը յանգելու: Այս պատճառով, տատամտտ անձը կը դառնայ յանձնառութեան նիւթին շուրջ եւ բնաւ չի համար վերջնական որոշումի մը: Հետեւաբար ան աւելի մտահոգ եւ ընկճուած կը դառնայ:

* Մէկ անձի սիրով յանձնառու ըլլալու եւ անոր հոգ տանելու վախը, որովհետեւ այդ յանձնառութիւնը կարգ մը մարդոց համար հսկայ եւ վտանգաւոր բեռ մը կը թուի ըլլալ:

* * * Բազմաթիւ տղաք եւ աղջիկներ կ'ապրին «յանձնառութեան սարսափ» կոչուող վիճակը: Ստորեւ կը գտնենք մի քանի խրատներ, որոնք կրնան օգտակար դառնալ ձեր բազմատուելու այդ վիճակէն եւ ունենալու երկու կողմերը գոհացնող յարաբերութիւն մը:

* Աշխատի՞ր ինքնագիտակցութեան վրայ, անկեղծ եղի՛ր քու անձիդ հետ եւ ներէ քու անձը՝ անթերի չըլլալուդ համար:

* Գնահատէ՛ քու կեանքդ եւ ապրելակերպդ, սկսելու համար յայտնաբերել այն ինչ որ անհրաժեշտ է փոփոխութեան համար:

* Ընդունէ՛ պատասխանատուութիւնը, որովհետեւ պէտք է գիտակցիս, որ դուն ես քու կեանքդ ու սէրդ կառավարողը:

ԵՐԵՆԱՅԻԴ ԱԿՈՒԱՆԵՐՈՒՆ ԶՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Ճանչցուած է, թէ երեխաներուն մեծամասնութիւնը երեք կամ չորս ակուայ հանած կ'ըլլայ մէկ տարեկանին: Իսկ երբ անոնք երեք տարեկան ըլլան, կ'ամբողջանան անոնց կաթի քսան ակուաները: Կարգ մը պարագաներու ժամանակ, երեխաներուն մօտ առաջին ակուան ի յայտ կու գայ մէկ տարեկանէն ետք:

Կաթի ակուաներու հոգատարութիւնը շատ անհրաժեշտ հարց մըն է: Կաթի ակուային փճացումը ցաւ կը պատճառէ եւ եթէ այդ ակուաներէն որեւէ մին ժամանակէն առաջ քաշուի, այդ արարքը կրնայ պատճառ դառնալ որ միւս ակուաները իրար մօտենան եւ հետեւաբար, յետագային գալիք բուն ակուաներուն տարածութիւնը կը նեղցնէ: Այս կէտը ձեւագեղծում կը յառաջացնէ ակուաներուն մէջ, որոնք ծուռ կ'ըլլան կամ իրարու վրայ եկած:

Երբ ակուաները լաւ ձեւով չի մաքրուին, ակուաներուն շուրջ կիր կը կազմուի, ուտելիքի, լորձուկի եւ պաքթերիայի կուտակումի որպէս արդիւնք: Երբ պաքթերիան շփում կ'ունենայ ուտելիքի մնացորդացներու հետ, մանաւանդ շաքարի հետ, դուրս կու գայ թթու նիւթ մը, որ կը յարձակի ակուաներուն վրայ եւ պատճառ կը դառնայ կիրի կամ շատ պզտիկ ծակերու, որոնք ակուաներու փճացում կը յառաջացնէ:

Ֆլորայտ նիւթը կը զօրացնէ ակուաները եւ կը պահպանէ զանոնք փճացումէ: Այս նիւթը կը գտնուի ակուայի ղեղերու բազմաթիւ տեսակներու մէջ եւ կարգ մը երկիրներու մէջ այդ կ'աւելցուի ըմպելիք ջուրին մէջ: Մայր մը կրնայ իր պզտիկին տալ այդ նիւթէն ումպեր, սակայն պայմանով որ նախապէս

խորհրդակցած ըլլայ ատամնաբու-ժին հետ: Ֆլորայտ նիւթէն բազմաթիւ եւ չափազանց ումպեր ստանալը երկար ժամանակի ընթացքին կրնայ տգեղ տեսք պատճառել ակուաներուն: Այս պատճառով, պզտիկներու ակուայի ղեղերը աւելի քիչ քանակով այս նիւթէն կը պարուսակեն, քան չափահասներու ակուայի ղեղերը:

* Պզտիկէդ խնդրէ օրական երկու անգամ ակուաները վրձինել, մանաւանդ եթէ ան շաքարեղէն կերած է:

* Անոր ուտելիք շոքոլաներուն կամ խմելիք օշարակներուն վրայ ստուգէ անոնց պարունակող շաքարին տոկոսը:

* Շաքարէ գուրկ եղող ղեղեր գնէ:

* Երբ երախող երկու տարեկանը ամբողջացնէ արդէն պէտք է զինք տանիս ատամնաբու-ժին այցելութեան:

* Թույլ մի տար, որ երեխող քնանայ օշարակ խմելու ընթացքին:

* Թույլ մի տար, որ ան ուտէ կամ օշարակ խմէ, քնանայէ առաջ ակուաները վրձինելէ ետք:

* Երեխող կանուխ տարիքէն վարժեցուր ակուաները վրձինել: Կանգնեցուր զինք քու առջեդ եւ գլուխը ծուռ դէպի ետեւ: Գործածէ ակուայի նուրբ վրձին մը (պզտիկներու յատուկ) եւ անոր վրայ դիր պիստակի չափով ակուայի ղեղ: Ակուաներուն ներքին եւ արտաքին կողմերը լաւ ձեւով մաքրէ: Խնդրէ իրմէ թթէ այդ օճառը փոխանակ ջուրով լուարէ բերանը, որպէսզի ղեղին մէջ գտնուող ֆլորայտը մնայ: Թույլ տուր երախայիդ անձամբ լուալ իր ակուաները, եթէ ան մերժէ դուն կատարես զայն:

ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 380-րդ կայանից

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
PALM SPRINGS ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝
 Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
 Long Weekend-ների համար՝ \$ 500
 Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
 Մէկ ամսուայ համար՝ \$ 1450

UNITED STATES POSTAL SERVICE (All Periodicals Publications Except Requester Publications)			
1. Publication Title	2. Publication Number	3. Filing Date	
NASSIE WEEKLY	0 6 6 7 - 3 1 0	11-05-2011	
4. Issue Frequency	5. Number of Issues Published Annually	6. Annual Subscription Price	
WEEKLY, except two weeks in August	50	\$50	
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®)			Contact Person
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104			
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer)			
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104			
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not insert initials)			
Publisher (Name and complete mailing address)			
DR. ARSHAG KAZANJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104			
Editor (Name and complete mailing address)			
VAHE ACHABIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104			
10. Total Number of Copies (Net press run)			
		3,500	3,500
a. Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)		123	123
b. Paid Circulation (By Mail and Outside the Mail)		383	383
(1) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)			
(2) Paid Distribution Outside the Mail Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS®		2,400	2,400
(3) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®)		66	66
c. Total Paid Distribution (Sum of 10a (1), (2), (3), and (4))		2,972	2,972
d. Free or Nominal Rate Distribution (Sum of 10d (1), (2), (3), and (4))			
(1) Free or Nominal Rate Outside County Copies Included on PS Form 3541		40	40
(2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541		35	35
(3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail)			
(4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means)		300	300
e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 10d (1), (2), (3), and (4))		375	375
f. Total Distribution (Sum of 10c and 10e)		3,347	3,347
g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3))		153	153
h. Total (Sum of 10f and g)		3,500	3,500
i. Percent Paid (10c divided by 10h times 100)		88.7%	88.7%
11. Publication of Statement of Ownership			
<input type="checkbox"/> If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the _____ issue of this publication.			
<input type="checkbox"/> Publication not required.			



Telethon 2011

November 24

Thanksgiving Day
8am – 8pm PST

Watch the 12 hour live webcast from anywhere in the world at www.ArmeniaFund.org



ARMENIA FUND TELETHON 2011



A GIFT OF | A GIFT OF
WATER | LIFE

Text Armenia to

50555

donate **\$10 TODAY!**

\$10.00 donation to Armenia Fund. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Message and Data Rates May Apply. Text STOP to 50555 to STOP. Text HELP to 50555 for HELP. Full Terms: www.mGive.org/T

KSCI
CHANNEL 18
8am-8pm PST
COAST-TO-COAST
LIVE BROADCAST

CHECK YOUR LOCAL TV LISTINGS

City-State-Region	Station	Digital Ch.	Cable Channel	Satellite	Time
Central California Fresno & Central California	KGMC Channel 43	43.1	COMCAST Channel 10 AT&T U-VERSE Channel 43	DISH 43	8am-8pm PST
Northern California San Francisco & Bay Area	KTSF Channel 26	26.1	COMCAST Channel 8 AT&T U-VERSE C Channel 8	DIRECTV 26 or 893 DISH 26 or 8237	8am-7pm PST
Southern California Greater Los Angeles Area	KSCI Channel 18	18.1	ALL CABLE SYSTEMS Channel 18 AT&T U-VERSE Channel 18 VERIZON FIOS Channel 18	DIRECTV 18 DISH 18	8am-8pm PST

For East Coast broadcast coverage, please visit www.ArmeniaFund.org

ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՅ ԳԻԼԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 150 ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Շարունակում է 7-էն

նուիրեալ դեկավարին կեանքէն: «Հակառակ իր կրած բազմաթիւ եւ բազմապիսի նեղութիւններուն, խոշտանգումներուն, մահափորձերուն եւ իր անձին դէմ ծաւալած արշաւին ու հալածանքներուն Սապահ Գիւլեան մնաց հաւատարիմ իր կուսակցութեան սկզբունքներուն, անոր քաղաքական եւ ընկերային դրոշմներուն պաշտպանը: Ունեցաւ ընտանիք, բայց չապրեցաւ ընտանեկան կեանք: Պայքարեցաւ հայրենիքի համար, բայց չտեսաւ այդ հայրենիքը: Ընկերավարութիւնը դարձաւ իր հաւատամքը, բայց հալածուեցաւ ամենուրէք, այդպիսի անգուգական դեկավար մըն էր ան: Գերագոյն գործողութիւններով պայքարեցաւ իր հակառակորդներուն դէմ եւ սակայն մնաց կուսակցութեան թէգերուն պաշտպանը: Ան առաջիններէն էր, որ կանխատեսեց, նախագահ Երիտթուրքերու հայաջինջ քաղաքականութիւնը, մասնակցեցաւ հայկական կամաւորական զուգորդութեան սկզբունքներուն, մինչեւ իր կեանքին վերջին պահը մնաց կուսակցութեան սկզբունքներուն պաշտպանը»: Բանախօս ընկերը համառօտ անդրադարձաւ Սապահ Գիւլեանի պատմական, գաղափարական, քաղաքական աշխատասիրութիւններուն եւ ամփոփ՝ վերլուծեց անոնց բովանդակութիւնը: Ընկեր Ահարոն Շիրտըմեան իր համապարփակ եւ հետաքրքրական բանախօսութիւնը աւարտեց պահանջելով, որ աշխարհասփիւռ հնչակեանները ուխտեն հաւատարիմ մնալ Ստեփան Սապահ Գիւլեան Մեծ տիտանին սկզբունքներուն եւ առաջադրեց մինչեւ անոր մահուան 90-րդ տարելիցին ոգեկո-

չումը, Հայաստան փոխադրել անոր անիւնները: Ներկաները ծափահարութիւններով գնահատեցին Ընկեր Ահարոն Շիրտըմեանին բանախօսութիւնը: Սապահ Գիւլեան մասնաճիւղը յորեալանական այս հանդիսութեան առիթով միաժամանակ յղացած էր իր մասնաճիւղի վեթերան ընկերները պարգևատրելու գեղեցիկ գաղափարը: Յաջորդաբար բեմ բարձրացան Սապահ Գիւլեան մասնաճիւղի մէջ երկարամեայ ծառայութիւններ մատուցած ընկերներ Նահապետ Ղարիպեանը, Երուանդ Աւետիսեանը, Կարօ Փետրոսեանը, Աւետիս Աւետիսեանը, Կարապետ Մուրադեանը, Ռսկի Եսփոնեանը, Սահակ Պէրպէրեանը, Գէորգ Նաճարեանը, Ճորճ Օհանեանը (ոմանք՝ ընկերներ Միսաք Արզումանեան, Նահապետ Կարդացողեան, Գէորգ Թաշճեան, Աւետիս Արթիւնեան, Օննիկ Սիսեան, Գրիգոր Հեքիմեան, Յակոբ Սալիպեան, Աշոտ Քէօսէյեան անհնազանդութեան պատճառով, ի վիճակի չէին ներկայանալու) եւ Կեդրոնական վարչութեան փոխատենապետ Ընկեր Սեպուհ Գալփաքեանի, Վարիչ Մարմնոյ ատենապետ ընկեր տօթթ. Մարտիկ Ժամկոչեանի, Սապահ Գիւլեան մասնաճիւղի ատենապետ ընկեր Յարութ Էօրեմեանի ձեռամբ ստացան այս առիթով պատրաստուած պատուոգիրները: Հանդիսութեան աւարտին, ընկեր Հրաչ Միւրմեանեան շնորհակալական խօսք ուղղեց սոյն միջոցառման ջանողութեան նպաստող բոլոր անհատներուն եւ միութիւններուն: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց արուեստագիտուհի Անահիտ Նանեմեան-Կետիկեանին եւ բանախօս ընկեր Ահարոն Շիրտըմեանին եւ իրենց սուղ ժամերը գոհած բոլոր ներկաներուն:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Շարունակում է 13-էն

Հոն ժողովականք, հայեր եւս որպէս դիտորդներ, զբաղեցան եկեղեցւոյ բնոյթով, եպիսկոպոսական իշխանութեամբ, ձեռնադրութեան կարգերով, Առաքելական յաջորդականութեամբ եւ սրբազան խորհուրդներով, որովհետեւ ասոնք եղան այն պահերը երբ միութենական հարցի ամենէն կենսական խնդիրները քննուեցան առանց սակարկութեան: Եկեղեցիներու յարաբերութեանց մէջ Լոզանի հանդիպումէն ետք ԵՂՆ-ի օրակարգին վրայ հիմնական տեղ գրաւած է «եկեղեցի»ի սահմանումը որպէս սկիզբ եւ սկզբունք: Որքան աւելի լաւ հասկցուէր եկեղեցւոյ իսկական նկարագիրը, այնքան աւելի յստակ կը տեսնուէր մերձեցման ձեւն ու նշանակութիւնը: Եկեղեցւոյ կեդրոնաձիգ եւ կեդրոնացնող նկարագիրը տիեզերական է որուն հետամուտ կ'ուզեն ըլլալ արեւմտեան եկեղեցիներ, դուռ մը բանալով եւ սա-

կայն ուրիշ դուռ մըն ալ փակելով: Ինչ որ կը մնայ ձեւական միութիւն մը կ'ըլլայ, ժողովակարական իր տկար եւ լայն իմաստով, որ ինքնին աւելի հրապուրիչ եւ օգտակար կը թուի ըլլալ ներկայ ժամանակներու ընկերային կեանքի բարուքումին համար: Աշխարհի ներկայ կացութեամբ կը յուսանք թէ ԵՂՆ ունենայ այն ազդեցութիւնը ինչ որ կանուխէն ունէր: Տասնամեակներու փորձի շրջանը թողուց իր բարի կնիքը եւ սակայն պետութիւններ իրենց քաղաքականութեամբ զբաղած, իրենց պարտաւորութիւնները նախընտրեցին, եւ եկեղեցին ընդհանրապէս աննկատ թողուցին ու մասնաւորաբար անոր բերելիք նպաստն ու օրհնութիւնը նուազագոյն չափով արժեւորեցին: Նման կացութեան մէջ ԵՂՆ-ը պիտի պայքարի տակաւին աղքատութեան եւ թշուառութեան դէմ, ի գործ դնելով իր բարի կամքը, պահելով նաեւ իր գոյութիւնը գալիք տասնամեակներուն:

ՍԻԻԶԱՆ ԽԱՐՏԱԼԵԱՆԻ «ՏԱՏԻԿԻՍ ԴԱԶՈՒԹՔՆԵՐԸ» ԺԱՊԱԻԷՆԸ

Շարունակում է 7-էն

աղջիկներու թղթածրարը, որոնք երբ հայութեան վերադարձած են, իրենց հետ բերած են բռնաբարուած եւ ուրիշներու կիներ եղած ըլլալու ամօթ մը, զոր ծածկելու բոլոր փորձերը ձախողած են, որովհետեւ այդ ամօթը լուելեայն անցած է սերունդէ սերունդ: «Տատիկիս Դաջուած քները» ժապաւէնին բեմադրիչը շնորհակալութիւն յայտնեց այս աշխատանքին մէջ իրեն օժանդակողներուն եւ ժապաւէնը նուիրեց երիտասարդութեան, որովհետեւ ան պիտի շարունակէ հատուցման պայքարը, տէրը պիտի ըլլայ մեր դատին: Ապա ցուցադրուեցաւ շուրջ մէկ ժամ տեւող «Տատիկիս Դաջուած քները», որ բաւական ազդեցիկ ու տպաւորիչ կերպով ընդունուեցաւ սրահը լեցուցած ներկաներուն կողմէ, մանաւանդ որ դաջուած քներ ունեցող կիներու թիւը քիչ չէ եղած, անոնք թերեւս մեր հետ ապրած մեծ մայրեր եղած են, սակայն ոչ ոք մտածած է, որ այս

դիւային դաջուած քներուն ետին ինչե՞ր թաքնուած են, ի՞նչ կեանք ապրուած է՝ Սիւզան Խարտալեան իր այս ժապաւէնով յանդուգն կերպով կը բանայ այդ կիներուն թղթածրարը, որպէսզի նաեւ հաստատէ, որ անոնք ամօթը կրողներ ու յանցաւորներ չեն, այլ՝ բռնաբարուածներ, որոնց նկատմամբ ընկերութիւնը եւս անարդար եղած է: «Տատիկիս Դաջուած քները» ժապաւէնը դիտելէ ետք իւրաքանչիւր հայ կը սկսի անպայման մտածել այս երեւոյթին մասին, ջարդուածներուն տեղ նոր սերունդներ ծնելու պարտականութիւնը իրենց ուսերուն առած, սակայն իրենց սրտին մէջ մեծ թախիծ եւ զաղտնիք մը պահած այս կիներուն խիզախութեան եւ վեհութեան մասին: Ներկաները բաւարարութեամբ հեռացան սրահէն, եւ հաւանաբար սկսան մտածել հայոց դէմ գործուած ցեղասպանութեան այլ մուտք էջեր մութի ու խաւարի պահարանէն դուրս բերելու մասին:

ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ

Շարունակում է 8-էն

պահեց, պահպանեց հարազատ լեզուն, որը ժողովուրդը կոչել է մայրենի: Եւ հպարտութեամբ եմ արտասանում մեր անձնակազմի բոլոր անդամների անունները. Սամուէլ Կարապետեան, Արմէն Նազարեան, Հայկ Բաղալեան, Սամուէլ Բաբասեան, Մուշեղ Բարսեղեան, Վահագն Մաթեոսեան, Սարգիս Կուզանեան: * * *

զգում ոչ միայն «Արմենիայի», այլեւ իմ սեփական ապագան: Սրտի երկու ծանրագոյն վիրահատութիւններ՝ կլինիկական մահով: Չարագոյն հիպերտոնիկ հիւանդութիւն՝ իր բոլոր, ոչ պակաս չար հետեւանքներով: Որպէս բժիշկ ես հիանալի հասկանում եմ, թէ դա ինչ է: Չեմ մոռանում եւ տարիքիս մասին՝ եօթանասունեօթ ու կէս: Ճիշտ այդքան կը լինեմ մէկ տարի անց, երբ մենք նորից դուրս կը գանք ովկիանոս, որպէսզի իրագործենք նոր նախագիծ: Ես չեմ կարող առանց ճանապարհի, առանց ծովի: Իմ սիրտը ուրիշ միջակ բաբախում է միայն ալիքների մէջ:


ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
Փաստիւնայի լաւ շրջանի մէջ,
Washington փողոցի մօտերը 1 սենեակով վարձու տուն
Վարձքը \$900 տուլար
Մանրամասնութեան համար
հեռաձայնել (310) 466-7775

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՄԱՐԿԴ



ՅԱԿՈՒՐ ՕԳՆԱՅԵԱՆ
(1923-2011)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր ամուսնույն, հօր եւ հարազատին՝ **ՅԱԿՈՒՐ ՕԳՆԱՅԵԱՆ**ի մահը, որ պատահեցաւ Նոյեմբեր 12ին, 2011, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 19 Նոյեմբեր, 2011, առաւօտեան ժամը 11:00ին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd., Pasadena, ապա գերեզմանի կարգը Mountain view cemetery 2400 Fair Oaks Avenue, Altadena:

Սգակիրներն են՝
Այրին Տիկ. Նորա Օգնայեան
Դուստրը՝ Սիրան Օգնայեան
Տէր եւ Տիկ. Սագո Օգնայեան (Լիբանան)
Տօքթ. եւ Տիկ. Սիմոն եւ Լենա Սիմոնեան եւ զաւակը Սեւակ Տէր եւ Տիկ. Ճօ եւ Գարին Զապունեան եւ զաւակը Արմէն Տէր եւ Տիկ. Մայք եւ Ժազիրն Օգնայեան եւ զաւակները (Միշիկըն)

Տէր եւ Տիկ. Շիրազ եւ Հերա Սիմոնեան
Տօքթ. եւ Տիկ. Հէրի Օգնայեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Պերճ Օգնայեան եւ զաւակները (Միլանօ)
Տէր եւ Տիկ. Արթօ Օգնայեան եւ զաւակները
Տիար Կարպիս Օգնայեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Գրիգոր Օգնայեան եւ զաւակները (Լիբանան)
Տէր եւ Տիկ. Եղիա Օգնայեան եւ զաւակները եւ Խաչիկ Տէր եւ Տիկ. Վաչէ Օգնայեան եւ զաւակը
Տիկ. Վիքթորիա Օգնայեան եւ զաւակները (Գանատա)
Տիկ. Սրբուհի Օգնայեան եւ զաւակները (Լիբանան)
Տիկ. Վարդիթեռ Երեսէյեան եւ զաւակները (Դամասկոս)
Տիկ. Արեւ Շիշմանեան եւ զաւակները (Գանատա)
Տէր եւ Տիկ. Յարութիւն Շիշմանեան եւ զաւակները
Տէր եւ տիկ. Նորայր Խաչատուրեան եւ զաւակները
Տիկ. Մարկրէթ եւ Մայքլին Օգնայեան (Միշիկըն) եւ համայն Օգնայեան, Սիմոնեան, Զապունեան, Համալեան, Լաչինեան, Թէքիրեան, Քելեկեան, Խաչատուրեան, Կիւրեղեան եւ Տօթուրեան ընտանիքները

ՄԱՐԿԴ

ԱՐՄԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
(Ծնեալ՝ Երեւան 1949-2011)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնույն, հօր, եղբոր, հորեղբոր եւ հարազատին՝ **ԱՐՄԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**ի մահը որ պատահեցաւ Կիրակի, 13 Նոյեմբեր 2011ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թաղման Տան Կարգը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 18 Նոյեմբեր, 2011, Երեկոյեան ժամը 7:00ին, Կլենտէյլի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, 1434 West Kenneth Road, CA 91201: Եկեղեցւոյ Կարգը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 19 Նոյեմբեր, 2011, կէսօրուան ժամը 12:00ին, միեւնոյն եկեղեցւոյ մէջ, ապա Գերեզմանի Կարգը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներն են՝
Այրին Մարինէ Յովհաննիսեան-Խրլոբեան
Դուստրը՝ Արիս եւ Լուսինէ Վարդանեան
Որդին՝ Տիգրան Յովհաննիսեան
Եղբայրը՝ Սամուէլ եւ Զարուհի Յովհաննիսեան (Երեւան)
Եղբայրը՝ Դաւիթ եւ Նունէ Յովհաննիսեան (Երեւան)
Եղբոր զաւակները Արտաշէս եւ Շուշան Յովհաննիսեան եւ Ռաֆայէլ եւ Մարինա Յովհաննիսեան (Երեւան) եւ զաւակները Միքայէլ եւ Ռուզաննա Յովհաննիսեան (Երեւան)
Վրէժ եւ Սոնա ձիճիեան եւ զաւակները եւ համայն Յովհաննիսեան, Խրլոբեան, Նազարեան, Մելիք Նազարեան, Մնացականեան, Թամրազեան, Վարդանեան, Սոսեան, Տիլանեան, Թեւոսեան, Կակաչեան, Աւագեան, Մարտիրոսեան ընտանիքներն ու հարազատները:

ՄԱՐԿԴ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒԹԱՅԵԱՆ
(1957-2011)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր զաւակին, ամուսնույն, եղբոր եւ հարազատին՝ **ՍԱՐԳԻՍ ՄՈՒԹԱՅԵԱՆ**ի անակնկալ մահը որ պատահեցաւ Նոյեմբեր 9, 2011ին սրտի կաթուածով:

Սգակիրներն են՝
Այրին Տիկ. Ալիս Մուլթաֆեան
Մայրը՝ Տիկ. Ազնիւ Մուլթաֆեան
Քույրը՝ Տիկ. Անահիտ Պէրպէրեան
Քույրը՝ Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Սոնա Գրգոչեան
Եղբայրը՝ Տիար Մինաս Մուլթաֆեան
Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Լիսա Մուլթաֆեան
Հորեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Պողոս եւ Ազատուհի Մուլթաֆեան
Հօրաքոյրը Տիկ. Մարի Գալթաքճեան
Հօրաքոյրը՝ Տիկ. Զապէլ Սարաֆեան
Մօրաքոյրը՝ Տիկ. Մարիամ Քաղէզեան
Մօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Այտա Ռէճէպեան եւ համայն Մուլթաֆեան, Եահիւնեան, Թոքճեան, Գալթաքճեան, Սարաֆեան, Ռէճէպեան, Քաղէզեան, Պէրպէրեան, Գրքաշարեան, Քանաքուրեան, Մանուկեան, Մարգումանեան, Եփրեմեան, Թաշճեան, Էլվուտ, Արապաճեան, Ժամկոչեան, Արվանիթովուլուս եւ Տէշօղլեան ընտանիքները:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ՂԱՍԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՂԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ԸՆՈԱԶԱՅՆԵԼ

(626) 797-7680



Ճաշկերոյթ Պարահանդէս
Նուիրուած

Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին

կազմակերպութեամբ

Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ յատուկ Լիբանանէն ժամանած, սիրուած երգիչ՝

Պերճ Նազգաշեան և իր նուագախումբը

Նախագահութեամբ՝

Տէր եւ Տիկին Թադէոս եւ Նորա Բէտորողեաններու

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011

երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ

Deluxe Banquet Hall

Շքեղ սրահէն ներս՝

237 East Olive Avenue, Burbank, CA 91502

Մուտքի Նուէր \$ 75.00

Մանրամասնութեան համար հեռաձայնել (626) 485-6434 (818) 324-0574